

Bg Sh w Sh Zc

902.6  
5-97

1903







# માત્રાંકનાના

303-1903



U. S.

## ՆՈՐԻՆ ՎԵՃԱՓԱՌՈՒԹԻՒՆՆ

S. S. ՍԿՐՏԻԶ Ա.

ՆԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԵԾԱՐԱՆՕՔ ՆՈՒԻՐԻ



903.6

5 - 97







5 OCT 2011

002.6 5+77

5-97 5-99

# U. L. Quathwah

$$\frac{720}{7 - \zeta \phi}$$


303-1903


# ՊԱՏԿԵՐԱՁԱՐԳ ՆՎԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ



# ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1903





## Ա Զ Դ

Ազգային մեծ յորելեանն, գրիգորաշէն և Տրդատաշէն տա-  
ճարի հաղար վեցհարիւրամեայ հիմնարկութիւնն, մեզ առիթ  
տուաւ Ս. Էջմիածնի նկարագրութիւնն առանձին հասորիկով  
նուիրել նոյն տաճարի հայրապետական գահուն վրայ տասը տա-  
րիներէ ի վեր բազմող ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ:

Այս մեր փոքրիկ աշխատութիւնն, ըստ կարելոյն կատարեալ  
ընելու համար, աչքի առաջ ունեցած ենք ցարդ Ս. Էջմիածնի  
վրայ հրատարակուած դրութիւնք:

Մեծայոյս ենք, որ հասորիկո՞ հաճելի պիտի անցնի, ոչ  
միայն Նորին վեհափառութեան, այլ և ի սփիւռս աշխարհի  
ցրուած ամէն հայու:

Հ. Ս. Էֆրիկեան





# Ս. ԷջՄԻԱԾԻԿ



ԱՅ ազգի կաթողիկոսներու բնակավայրը, հնագարեան հռչակառը վանքս կը գտնուի Այլուրատայ Արագածոտն գաւառի մէջ, Վաղարշապատու հարաւային կողմը։ Տրդատայ մքանչելի գարձն պատճառ եղաւ Հայաստանի պարծանք Մայր եկեղեցւոյ կառուցմանը՝ ի պատիւ Ա։ Հոփիսիմեանց նահատակութեան, ինչպէս որ հրեշտակը Ա։ Գրիգորի տեսլեան մէջ ցոյց տուածէր։ Ազաթանզեղոս այս մասին կը զրէ. «Եւ մի տեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ՝ որ զառաջոն ունէր և զէջոն ի վերուստ մինչեւ ի խռնարհ... և ի ձեռին իւրում տոն մի մեծ ոսկի... ինքն սլացեալ դայր ըստ արագաթեւ նմանութեան արծուոյ և եկն, էջ, եհաս մօտ ի յատակ երկրիս ի շինամէջ քաղաքին. և բախեաց զմանձրութիւն լայնատարած գետնոյ... և տեսանեմ ի մէջ քաղաքին մօտ յասկարանս արքունի... խարիսխ ոսկի», և այլն։ Այս տեսլեան նշանակութիւնը հրեշտակը ինքնին

ըացատրելով Ա. Լուսաւորչի կ'ըսէ . «Արդ զգոյշ լեր աւանդիլ որ քեզ  
հաւատացաւ ի Տեսանէ Յիսուսէ Քրիստոսէ , շինեսջիր զտաճար անուանն  
Աստուծոյ՝ որ ցուցաւ ի տեղւոջն՝ ուր սիւնն հրեղէն ունէր զուկի խու-  
րիսխն » , և կանխեց միանգամայն ըստ , թէ «տեղին այն լիցի տաճար  
Աստուծոյ , և տուն ազօթից ինպրուածոց ամենայն հաւատացելոց , և աթոռ  
բահանայութեանն » : Ա. Գրիգոր Լուսաւորիչ , տեսլեան այն ոսկեղէն ուսով  
զարնուած տեղը սկսաւ շինել քրիստոնէական մայր տաճարը . որ այժմ  
եւս ծանօթ է և կը կոչուի Խօման տեղի , և խորանը՝ Շողակար Աստուծու-  
ծածին . ասոր շինութեան մասնակցեցաւ նաեւ Տրդատ թագաւորը իր պա-  
լատականներով և ժողովրդով և աւարտեց 303 թուին : Տաճարն և վանքն  
եւս կը կոչուի Էջմիածին իբր Էջք Միածնի Որդւոյ Աստուծոյ , կամ հոն  
Էջ (իջու) Միածինն , ինչպէս սովորաբար կը հասկնայ մեր ազգը՝ ուսնու-  
ուոր մարդու ահաւոր տեսլեամբ յայտնուելով Ա. Գրիգորի<sup>1</sup> . թէպէտես մեկնիչ

1. Իբրեւ հետաքրքրական ինչ , ասու կը գնենք 1731 թուին Վիեննայի մէջ փո-  
րագրուած և տպուած  $70 \times 90$  հարիւրամետր մեծութեամբ Ա. Գրիգոր Լուսաւորչի  
պատկերի մը փոքրադիր նմանահանութիւնն : Պատկերի շուրջը , ինչպէս կը տես-  
նուի , նկարուած են 14 բոլորակներու մէջ Ա. Գրիգորի չարչանքները : Մեզ  
համար աւելի հետաքրքրական է մէջ տեղի պատկերը . վարի կողմը Ա. Գրիգոր  
Լուսաւորիչ կը մկրտէ զՏրդատ , որու աջ կողմն ծնկաչոք և ձեռնամած կեցած են  
Խոսրովիդուխու և ուրիշներ : Վերի կողմը կեդրոնն նկարուած են Հայր , Որդի և  
Հոգի Սուրբ Աստուծած ամպերու վրայ : Ամպերէն ճառագայթներ արձակուած են  
դէպի Էջմիածնի տաճարը , որ տարօրինակ ձեւով գծուած է դէպի վարով . ճառա-  
գայթներու մէջ կը կարդացուին հետեւեալ բառերը . «Տեսեալ զլոյս մէծ հայրա-  
պետին Գրիգորի , պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային . Պարտ է մեզ  
շինել ասու սուրբ զխորանն լուսոյ , քանզի էջ Միածինն փառօք ի հայրական ծո-  
ցոյ » : Ա. Էջմիածնի մօտ է Վաղարշապատ քաղաքը , դէպ ի վեր Ա. Գայիանէի  
վանքը և դէպ ի ձախ Ա. Հոփիսիմեանց վանքը և մարտիրոսութիւնը : Այս վան-  
քերու և շինուածոց ճարտարապետական ձեւերն , կարելի է աւելի հոռվմէական  
համարել քան հայկական : Կողմնակի գծուած է նաեւ լուսոյ սիւնը և հայկազանց  
մկրտութիւնը , Աեպուհ լեռը՝ ուր այրի մը մէջ Ա. Գրիգոր կը ճգնի . քիչ մը վար  
կը տեսնուի Մասիս՝ վրան Կոյեան տապանը , մէջտեղը պահապան հրեշտակը և  
դէռ աւելի վար Ա. Ցակոր Մծբնայ հայրապետը և իր վանքը : Պատկերի վարի  
կողմը գրուած է լատիներէն և գերմաներէն Ա. Գրիգորի վարքը և երկու ուղի մէջ  
ալ կը կարդացուի հետեւեալ հայերէն յիշատակարանը . «Ով բազմաչարչար , յաղ-  
թող և քաջ նահատակ և խոստովանող վկայդ Քրիստոսի սուրբդ Գրիգորիոս լու-  
սաւորիչ Հայաստանեայց , ազօթեա վասն ամենայն հաւատացեալ քրիստոնէից  
մանաւանդ քրտնաջան վաստակօքդ սուացեալ ժողովրդեանդ ազգին Հայկազունեաց :  
Ազերսեմ և ես անարժան և նուաստ ամենից , Երգուրումցի մահտեսի Յոհան մէլիքի  
որդի Ցակորս , որ ետու տպել արդեամբ իմով զհրաշալի պատկեր չարչանաց և  
սրանչելազործութեանցդ քո ի կայսերանիստ մայրաքաղաքն Վիեննայ ի թուին  
Փրկչին ՈՒՃԱԱ. հոկտ . ժե . ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ամէն » :




Հրեշտակը յայտնառէս Որդին Աստուծոյ չի ցուցնէր, այլ կ'ըսէ . « այս Տեսչութիւնն Աստուծոյ է, որ հայի յերկիր և տայ զողալ : ... Այն ահ աստուածութեանն՝ հարթեաց կործանեաց ընկեաց զմոլորութիւնս յերկրէ » : Բայց Շողակաթին շարականը կը վկայէ՝ թէ ազգին քրիստոնէութեան առաջին գարերէն, այսպէս կը հաւատային տեսլեան մէջ երեւցող սրանչելի մարդը՝ բլլալ Որդին Աստուծոյ, անօր համար և երգեր են ու կ'երգեն.

« Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա .  
Զայնք հնչեցին Անդարամետք անդնդոց », և այլն :

Ասկէց յատկացուած է տեղւոյն Էջմիածին անունը . բայց թէ երբ և կամ ով նախ այս անուամբ կոշած է, քննութեան կը կարօտի : Ալիշանի կը թուի, թէ շատ հին չէ այս անուան զործածութիւնն և վերսիշեալ շարականէն վերջ առաջին անգամ զործածած է Օրբելեան՝ Վաղարշապատի Ողբին մէջ .

« Այս ես՝ այս ես՝ Էջք Միածնին  
իմ կուսածին թագաւորին » :

Տեղւոյս սրոշակի Էջմիածին կոչումն ՓԵ գարէն առաջ չի յայտնուիր . և զրեթէ առաջին անգամ Աթոռոյն վերանորոգութեան ժամանակ թուվմաս Մեծոփեցիէն կը յիշուի . իսկ նոյն գարու զրոց յիշատակարաններու մէջ միասին կը զրուին Վաղարշապատի և Էջմիածնի անունները : Մայր եկեղեցւոյ հետ շինեցին նաև հայրապետանոց և եկեղեցւոյ սովասաւորներու համար հարկաւոր բնակարաններ : Դարձեալ Առորք Գրիգորի տեսիլբէն Շողակար կոչուած է խորանն, իբր նոյն տեղը « սիւն զործեաց լոյսն շողացեալ » , ինչպէս կ'ըսէ Ագաթանգեղոս : Մեր յետազայ սղատմիշները սովորաբար կ'անուանեն Շողակար Աստուածածին, Էջմիածին և Մայր եկեղեցեաց : Էջմիածին անմիջապէս եղաւ Հայոց քահանայապետութեան կամ կաթողիկոսութեան աթոռ, որոն առաջին քահանայապետն եղաւ Ա. Գրիգոր 302 թուին : Մինչեւ 453 թուականը 12 կաթողիկոսներ նստան Էջմիածին և 484 ին քաղաքական հանգամանքներու ստիպմամբ Աթոռը Գուին փոխագրեցին . այնուհետեւ մինչեւ ՓԵ գար զուրկ մնացած է հայրապետական աթոռ լինելէ : — Ի հումն Էջմիածինը մասն էր Վաղարշապատի, բայց բաւական ժամանակ է որ անկէ զատուեր և մի քիչ հեռացեր է : Ամբողջովին պարսպապատ է և քառակուսի ձեւով, ունի իբր 275 մետր երկայնութիւն արեւմուտքէ արեւելք և 235 մետր լայնութիւն հիսուիսէն հարաւ . պարիսպը շինած է Ախմէոն կաթողիկոս 1768ին . հիմունքը



### ՅԱՏԱԿԱՂԵԿԻ ԵԶՄԻԱՆՆԻ

1. Կաթողիկէ եկեղեցի. – 2. Թանգարան. – 3. Շիրիմ Մաքտոնալտի. – 4, 5. Դանիէլ եւ Ներսէս և կաթողիկոսներու շիրիմներ. – 6, 7. Յովհաննէս Ծ եւ Գէորգ Դ կաթող. շիրիմ. – 8. Ազբիւր. – 9. Դուռն (Դարպաս) Տրդատայ. – 10. Դռ. Վեհարանի. – 11. Դռ. Սիւնհոդոսի. – 12. Ներքնայարկ Վեհարանի. – 13. Գանձատուն. – 14. Եպիսկոպոսներու կրկնայարկ բնակարաններ. – 15. Ծառայից բնակարաններ. – 16. Միաբաններու խուցեր. – 17. Մոմատան դուռն. – 18. Մոմատուն, պարուէզ եւ բնակարաններ. – 19. Հին վարժարան. Միաբաններու խուցեր. – 20. Ճեմարանի ելք. – 21. Ծառայից եւ մնտեսի սենեակներ. – 22. Փուռն. – 23. Տպարան. – 24. Մառան (Շիրախանայ). – 25. Հացտուն եւ շումարան. – 26. Դարպաս Քշուկի. – 27. Տնտեսուուն եւ խոհանոցք. – 28. ՈԵղանատուն ամարան. – 29. Աեղան. Ճմերան. – 30. Մատենադարան. – 31. Պազարապատ. – 32. Աւազան. – 33. Պազարապատի դուռն. – 34. Լիճ եւ փոքրիկ աւազան Ներսիսեան. – 35. Մորի դուռն. – 36. Կալի դուռն. – 37. Աւազան կճեայ. – 38. Վեհարանի պարտէզ. – 39. Հին Վեհարան (Թանապէ). – 40. Ժողովարան (Սիւնհոդոս) եւ Դիւան. – 41, 42. Բաղնիք եւ դուռն. – 43. Շուկայի դարպաս. – Վեհարան՝ հաստատուած 9, 10, 11, 12, 13 թուոց վրայ:

կոփածոյ բարերով և վերին մասը աղխառով . կան տասն և վեց բոլորչի բուրգեր անկեանց զլուխները և չորս կողմերը տեղ տեղ , որով ամբոցի նմանութիւն ունի : Պարսպին ներսը միջավայրը կայ հաւասարակողմն բառանկիւն մը , շուրջը վանաց զանազան շինութիւնները , և կեղրոնք կաթողիկէ եկեղեցին՝ որուն չորս կողմբ ընդարձակ բակ է : Այս բառանկեան և արտաքին պարսպի մէջ կան այլ և այլ կարեւոր շինութիւններ և արձակ



Եջմիածնի ընդհանուր տեսարանը :

վայրեր , ինչպէս կը տեսնուին յատակագծի մէջ : — Պարիսպը ունի չորս մեծամեծ և կամարակապ գոներ , մին արեւմտեան հիւսիսիային ծայրը որ կը նայի գեղի վաղարշապատ և կը կոչուի Գիւղի Պարսպս կամ Շուշիայի դուռն : Երկրորդը՝ Գուռն Ղազարապատի կը գտնուի արեւմտեան հարաւակողմը , որ մեծ բակ մը կը տանի , որուն մէջ աւազան կայ և շուրջը ոփառուրներու կամ հիւրերու ընակարաններ և ամբարանոցներ . ասոր արեւելակողմն է Գուռն Մարի կոչուածը , որ կը հանէ Ղազարապատի ընդարձակ հրապարակը . նոյն տեղը կը հանէ նաև հարաւային կողմի արեւելեան

**Ճայրէն Գոռոնե Կրակի ըստւածը , ուսկից կը բերին Աթոռոյն կալուածներու տրդիւնը . փոքրիկ մուտք մ'ալ կայ արեւմտակողմեան հարաւային ծայրը՝ Բաղամեաց դուռն կոչուած : Քառանկիւնը մանելու համար ալ հինգ զուօններ կան , որոնց զլիաւորն է արեւմտեան կողմինը՝ կաթողիկէի մտից զիմաց և կը կոչուի Տրդատայ անուամբ , վասն զի կը համարին թէ այն կողմն եղած է արքունի ապարանքը : Մեծ պարսպի շինութեան յիշատակարանն արձանագրուած է Կրակի զրան վրայ , շինարար Ախմէոն կաթողիկոսի անուամբ , համառօտ կերպով 1768 թուականաւ .**

Շինեցաւ բոլը շրջապատ պարիսպս սրբոյ Աթոռոյս ի նիմանէ , ի փառ Աստուծոյ եւ ի պարծանս ազգիս Հայոց , նրամանաւ Տեառն Ախմէոն կաթողիկոսին . ի ՌՄԴԵ թուոչ մերում :

**Բուրգերէն ամանց վրայ կան հետեւեալ արձանագրութիւնները .**

**Ա. Յիշատակ է բուրգս Վափանեցի մահտեսի Գրիգորին եւ որդւոյն Յարութիւնին եւ Եղիային . Թվ. ՌՄԴԳ :**

**Բ. Շինեցաւ մեծ բուրգս արդեամբք ի յԱտրանայ Ատւաֆ մահտեսի Զաքարիային եւ նանգուցեալ եղօրն իւրոյ մահտեսի Գրիգորին . ի յիշատակ ամենից կենդանեացն եւ ննջեցելոցն իւրեանց . Թվին ՌՄԴԵին :**


**Գ. Շինեցաւ բուրգս այս արդեամբ սրբոյ Սաղիմայ Պատրիարք Տեառն Կարապետի աստուածաբան վարդապետին , ի յիշատակ իւրեան եւ նոգեւոր եւ մարմնաւոր ծնողաց իւրոց , ի ՌՄԴԶ :**

**Ուրիշ տեղ մը պարսպի վրայ երկու բուրգերու մէջ տեղ արեւելեան հարաւային կողմը զրուած է .**

Յիշատակ է եօթնագազաշափ տեղ ի պարըսպէն Ագուլցի Ռսկանի որդի Յովսետին եւ իւր կենսակցին , եւ որդւոյն Դամիէլին եւ այլոցն . Թվ. ՌՄԴԵ :

**Եջմիածնի Գրիգորաշէն և Տրդատաշէն տաճարը թէեւ զանազան ժամանակաց մէջ աւերեցաւ , սակայն աւանդութիւն է , թէ չափը և ձեւը նոյնակն անփոփոխ մնացած են : Քառակուսի խաչաձեւ է , կարծ թեւերով և միջակ մեծութեամբ , իրք 35 մետր երկայն ,  $33\frac{1}{2}$ մ . լայն և 23մ . կամ աւելի բարձր , իսկ զրոի բակով միասին մինչեւ արեւմտեան զուռն հաշուելով՝**

երկայնութիւնն կ'ընէ 42 մետր։ Զորս սիւներ խաչաձեւ խարիսխներով տաճարին մէջտեղէն վեր կը բռնեն զմբէթը։ Յայտնի չէ թէ ինչ նիւթով շինուած էր տաճարս Դ գարու մէջ, բայց կը թուի, թէ ոչ ամբողջովին բարէ, այլ փայտակերտ, ինչու էր նաեւ երկրորդ անգամ շինուածն նոյն գարուն վերջերը։ վասն զի հաւանօրէն աւերեցաւ կաթողիկէս ուրացող Մերուժանէն և Պարսիկներէն, որոնք ի հիմանց քանդեցին Վաղարշապատը, և նորոգուեցաւ Մամիկոնեաններէն։ Առաջին կամ երկրորդ շինութեան ժա-



Եջմիածնի Կաթողիկէին յառակածեւը։

մանակէն և հայ տառից գիւտէն առաջ քանդակուած կը թուին երկու յունատառ արձանագրութիւններ և բարձրաքանդակներ՝ ազուցուած հիւսիս-արեւելեան որմոյն բաւական վերը։ Ասոնցմէ մին՝ կը ներկայացնէ Պօղոս առաքելոյն և թեեկղ կուսի սպատկերները հանդերձ նոյն սուրբերու անուններով։ Միս արձանագրութիւնը, ըստ Պոռէի՝ ննջեցեալներու անուններ և ազօթք կը կրէ. բոլորակի մը մէջ կայ հաւասարաթեւ խաչաձեւ մը, շուրջը զրուած է յաւնարէն։ « Օգնեա ամենայն ազօթողաց յեկեղեցւով »։ վերի երկու անկիւնները կան երկու ազաւիններ. խաչին թեւերուն մէջ զրուած

է մաղթանք մը Զուիթայի . բոլորակէն զուրո աջ կողմն կը կարգացուի « Տէր ողորմեա ծառայի քում Արքեայ » , իսկ ձախ կողմը . « Տէր ողորմեա Ելպիդեայ » . վարն ալ կան երեք անուններ Գանիկէ , Տիրէր (Տիրայր) և Գարեգին : Այս արձանագրութիւնները վերջին անգամ ուսումնասիրեց Դ. Յովսէփ Ստրցիգովսկի , 1901ին , Էջմիածնի Աւետարանին վրայ դրած միջոց , որուն հայերէն թարգմանութիւնն քաղուածօրէն հրատարակուեցաւ Հանդէս Ամսօրեայի նոյն տարուան ապրիլի և մայիսի պրակներու մէջ , հանդերձ նոր և ճիշդ զծուած պատկերներով : — Վահան Մամիկոնեանը մարզպանութեան իշխանութեան հասնելով , ինչոքս կ'ըսէ ժամանակակից Պաղար Փարպեցին , « Հիմնարկեալ նուրոգեաց մեծապայծառ շքեղութեամբ ըզ-հնացեալ զործ նախնեացն իւրաց » . շինուածքի նիւթոյն վրայ թէեւ խօսք




Էջմիածնի Կաթողիկէի մէջ Ա. Պօղոսի  
և Թեկղի բարձրագանդակ :

Էջմիածնի Կաթողիկէի մէջ յունարէն  
արձանագրութիւն :

Հկայ , բայց հաւանական է որ քարաշէն եղած լինի և միայն տանիքը փայտեայ . վասն զի Սերիսս կ'ըսէ , զրեթէ 100 տարի վերջ կոմիտաս կաթողիկոսի համար , թէ Ա. Հոփիսիմէի եկեղեցւոյն շինութենէն վերջ , « վերացոյց և զփայտակերտս որբոյ կաթողիկէին , նորոգեաց և զխախուտ որմոյն , շինեաց զքարայարկոն » . իսկ Յովհաննէս կաթողիկոս պատմիչը՝ զովութեամբ կ'ըսէ . « Եինէ զնա զեղեցկայարմար և չքնազատես կոփածոյ քարամբը » : Եինութեան քարերը հրաբղխային են՝ սեւ և կարմիր և որմերը հաստատուն ու թանձր , այնպէս որ , Մորիէ Անգլիացին կ'ըսէ . միայն սաստիկ երկրաշարժով կամ ոմբաձզութեամբ կարելի է զայն կործանել : — Եերսէս Գ. Եինողն , որ Առազարի Ա. Գրիգորը և Գունայ եկեղեցին շինեց , այս կաթողիկէ եկեղեցւոյն մէջ ալ շինութիւններ ըրաւ . բայց յայտնի չէ

ինչ մասեր : Անյայտ կը մնան նաւ Ե գարու կէսէն մինչեւ Ժ դար , կաթողիկոսներու Գուին նստած ժամանակ , հանդիպած լոլոր զէպէր . բայց միայն կը յիշուի թէ միշտ պատռի մէջ էր վանքս , և զանազան կողմերէ ուխտի կու գային : — Ա . Գրիգոր Լուսաւորչի ժամանակէն հաւանական է որ կաթողիկէի մօտ վանականներու և եկեղեցւոյ սպասաւորներու յատուկ բնակարան կար , և Ասողկայ պատմչի մէկ խօսքէն , Հ . Ալիշան կը կարձէ , թէ այդ տեղը կը կոչուէր Սուրենայ անապատ , Վահան Մամիկոնիանէն առաջ : Վահան՝ եկեղեցին նորոգած միջոց՝ Ղազար Փարզեցի պատմիշը՝ վանահայր զրաւ , ինչպէս յայտնի է պատմութենէն . « Կամեցեալ մեծի



Եջմիածնի Կաթողիկէի հին ձեւը :

իմաստութեանն Վահանայ Մարզպանին . . . զնա իւր առաւել մերձաւոր և սիրելի առնել , շնորհէր նմա զնոյակաց և զականաւոր տեղին ի Նոր քաղաքի (Վազարշապատ) , որում անսւնն էր Սուրբ Կարողիկէ եկեղեցի , վանօքն . և նորա ընկալեալ զբանն Մարզպանին՝ ինամածէր զտեղին : Պատահեաց նմա կրել տրամութիւն ի վայրապար մարդկանց . զի ի հրոյ վեասեալ փայտակերան եկեղեցւոյն » , զինքը կը մեզագրէին . այդ պատճառու ժամանակ մը Ամիդ զնաց , ուր տեղէն զրեց իր անձին ջատագովութեան թուղթ մը և նորէն զարձաւ Համազասպ Մամիկոնիանի բարեխօսութեամբը : Այդ թղթի մէջ Ղազար կը յայտնէ ուսումնատեաց արեղաներու նախանձը , տեղւոյն վրայ ըրած ինամքն ու շինութիւնները : Ղազարէն վերջ մինչեւ

Կիւրիոն, չի յիշուիր վանահայր. իսկ Կիւրիոն, Մովսէս կաթողիկոսի օրով նոյն տեսչութեան մէջ մնաց եօթը տարի, և յետոյ Վրաց աշխարհին կաթողիկոս ընարուեցաւ։ Եւ դարու սկիզբը կաթողիկէի վանաց երէց էր Աքրածամ անուամբ մէկը, որ ի Գուին համանոն կաթողիկոսի ժողովին մէջ գտնուեցաւ. անկէ վերջ եղած է Յովհան կամ Յովհաննիկ՝ Կոմիտաս կաթողիկոսի օրով 618ին, Վաղարշապատի եկեղեցիներու նորոգութեան ժամանակ։ Ասկէ վերջ Եզր՝ իրեւ փակակալ կաթողիկէին, որ վերջը կաթողիկոս եղաւ և իրեն օրով ժամանակ մը նոյն պաշտօնին մէջ կեցաւ Յովհաննէս Մայրավանեցին։ Որմէ վերջ չեն յայտնուիր յաջորդներ։ Թերեւս անմիջապէս նոյն ատենները Աքրածացոյմէ աւերեցաւ տեղը, որոնք (637–646) արշաւեցին Հայոց Ռոտանի վրայ, և թերեւս Ներսէս Շինող՝ ասոնց աւերածները նորոգեց ու կարկատեց։ Յայտաւուրաց համեմատ, Նունէի Խաչի պատմութեան մէջ կ'ըսուի Ափի ոստիկանին համար, թէ աւերեր է «զմեծ կաթողիկէն զՎաղարշապատ» որ ասի Եջմիածին։ բայց ասոր յիշատակութիւնն ուրիշ պատմիչներ չեն ըներ։ Բազրատունեաց Գագիկ վերջին թագաւորն Վաղարշապատ այցելած միջոց, տակաւին շէն էր կաթողիկէն, բայց անկէ վերջ անյիշատակ կը մնայ և մինչեւ այն աստիճանի կը հասնի ամայանալն, որ ՃԳ դարու վերջերը Ախնեաց եպիսկոպոսը յատուկ ողբ կը զրէ։ Բայց վանքս բոլորովին ամայի և անտերունչ մնացած շլինելուն վկայ են նոյն ժամանակները այցելող ուխտաւորներն։ Եջմիածնի աթոռոյն նորոգութեան զլիստոր պատճառ եղած է Թուլմաս Մեծոփեցի պատմիչը, որ շատ երազարանութիւններէ վերջ, մանրամասն կը պատմէ ժողովոյն հանգամանքները. ժողովոյն ներկայ եղողները և կաթողիկոսի ընարութիւնն, այսպէս

«Եւ այս են ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք. Յովհաննէս վարժապետն և ուսուցիչ ի սուրբ ուխտէն Հերմոնի վանից, և աշակերտք իւր Դաւիր վարդապետ, ի տանէն Ախնեաց, բազում քահանայիւք. — Շմաւոն վարդապետ չնորհալից աթոռոյն Ատաթէի առաքելոյ. — Գրիգոր վարդապետ և եպիսկոպոս Ա. Առաքելոյն թւագէոսի. և միւս Գրիգոր վարդապետն և եպիսկոպոս հոչակաւոր ուխտին Հաղբատու։ Իսկ ի յԱրարատեան գաւառէն, Կիրակոս վարդապետ Բաշտունեցի. — Արդիս վարդապետ Զագավանից. — Տիրացու վարդապետ Վանանդեցի ի Ախնեաց. — և ի կողմանէ Վասպուրական գաւառին՝ Թումայ վարդապետ (ինքը Պատմիչը) և Մկրտիչ վարդապետ ի Ա. ուխտէն Աբեծոփայ վանաց. — Կարապետ վարդապետ և Յովսէի վարդապետ ի մայրաքաղաք վանորէիցն, ի սուրբ ուխտէն Աստուածածնին Խառաբասու. — Ղազար վարդապետ ամենայն կողման բաղիշու. — Արդիս կամ (Ատեփանու) վարդապետ և Յովհան վարդապետ Արծկու. — Զաքարիա վարդապետ Վարագայ մայրաքաղաք վանորէիցն, և Տէր Յոհաննէս։ Եւ երկուտասան եպիսկոպոսք աստի և անտի. Տէր Զաքարէ ի Հաւուց-

թառայ, ի յազատորդեաց. Տէր Գարբիկլ Ա. Էջմեածնին. Տէր Կարապետ Յոհաննուլիստիկանից. Տէր Յովհաննիս Բջնու. Տէր Անտոնի Վիրապին. Տէր Յովհաննիս Արճիշու Մեծոբայ վանից. Տէր Յակոբ Կողբայ. Տէր Մկրտիչ Բագրանու. Տէր Մարտիրոս Հաղբատու. Տէր Ազարիա Գանձասարու. Տէր Զաքարիէ Կորավանից. Տէր Ատելիանոս տեղապահ Ախունեաց աթոռոյն, ի յազատաց. Տէր Կիրակոս Սալնապատայ: Եւ այլ բազում վանորայք և կրօնաւոր սուրբ հարք, և պատուական երիցունք՝ աւելի քան զ'300 անձինս, և բազում միայնակեացք, և ազատք և որդիք ազատաց, ձեռնաւորք և տանուտէրք, և անթիւ և անհամար բազմութիւն ժողովը վարդեան, արանց և կանանց: Եւ ի հեռաւոր վարդապետաց և եպիսկոպոսաց՝ թղթով միաբանեալ ընդ մեզ, Աշետիս վարդապետ Ա. Խաչեցի. Յովհաննիս վարդապետ Վարդինեցի. Յովհաննիս վարդապետ Գամաղիելու. Կարապետ վարդապետ Հիգնայ. Յովհաննիս վարդապետ Բարիձորյ. և միւս Յովհաննիս վարդապետ Գամաղիելայ. և Գաւիր Եպիսկոպոս, և Աշակ. Տէր Ատելիանոս Եպիսկոպոս Բաղիշու, և Տէր Բարսեղ, և Տէր Աշետիս Եպիսկոպոս. Տէր Յովհանի, Տէր Գրիգոր, Տէր Թորոս գերանոչակ ուխտին Ա. Կարապետին. Տէր Պօղոս և Տէր Զաքարէ սուրբ ուխտին Առաքելոց. Տէր Կիրակոս Վանագրին. Տէր Յովհաննիս Սասնոյ (Կամ Սալնոյն), և Տէր Յովհաննիս մեծահանդէս ուխտին Վարագայ. Տէր Կիրակոս Ա. ուխտին Սալնապատայ:...

Եկաք ի գեղաքաղաքն Երեւան... և որպէս յաւուր գալստեան Փրկչին ի սուրբ քաղաքն Երուսաղէմ մեծաւ ուրախութեամբ ընդ առաջ Ելին, նոյնպէս և այսօր Հայոց եղեւ. զի ի վաղուց հետէ անտերունչ կային, և ոչ էր տեսեալ այսպիսի ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք ի մի միաբանութիւն. և սիրով ընկալան զմեզ և զժողովուրդս մեր և զամենայն եղբարքս մեր, իբրեւ զառաքեալս և զհրեշտակ Աստուծոյ, մեծամեծք և փոքրոնք, կարգաւորք և աշխարհականք: Խոկ ի միւս օրն եկն հրաման ի բռնաւորէն Աղուսպ—ընկ անուն, և հասաք առ նա. և նա իբրեւ զժագաւոր քրիստոնէից մեծարեալ՝ մեծաւ սիրով և պատուվ ընկալաւ զմեզ. և այզուցն առեալ զզօրս իւր և զմեզ զամենեսեան, փողով և թմպկով, զոչմամբ բարձրագունիւ մտաք ի Ա. քաղաքն Վաղարշապատ. և հաւատացեալք և հաւատարիմ ժողովուրդն ի Քրիստոս և անհաւատքն՝ ընդ առաջ Ելեալ զարմանային:... Եւ մեք ամենեքեան միաբան օրհնեցաք զԱստուած ի ձայն ցնծութեան, Փառք քեզ, Աստուած, յաղագս ամենայնի: Եւ հրաման եղեւ ի բռնաւորէն օրհնել կաթողիկոս՝ առանց հակառակութեան. և բազումք ի յեղբարցն յառաջ կոչեցան զալ ի յառաջնորդութիւն Թորգոմական գրոհիս. և ոչ կամեցան բառնալ զծանրութիւն դառնութեան բարձրագոյն աստիճանին. ապա յետ այնորիկ ապաւինեցաք յԱստուած, և միաբանութեամբ սկսաք ազօթիւք և պաղատանօք խնդրել յԱստուծոյ, տալ մեզ առաջնորդ ըստ կամաց իւրոց:... Եւ մեք ուրախացեալ օրհնեցաք զԱստուած. և դարձեալ ի նոյն օրհնութեան ձեռնադրութեանն, արկին վիճակ ի սուրբ աւետարանն. և ել վիճակն Կիրակոս հայրապետին. և առանց հակառակութեան եկեալ կանգնեցաւ ի մէջ ահագին առենին. և մեք հիացեալ զարմացաք ընդ հնազանդութիւն առնն Աստուծոյ, և զժողուլ կամաց իւրոց. զի կարի անհնազանդ բարս ունէր, և ատէր զի՞առս Երկրաւորս. և յիշեցաք զԱստուած, և սկիզբն արարաք ձեռնադրութեան. և ահա եկն ի ժամուն յայնմիկ արծիւ մի սաւառնեալ սաստիկ զոչմամբ, նստաւ ի վերայ զլիսոյ Էջմիածնին. և թողին բազումք զհոգեւոր խրախութիւնն, Ելեալ տեսին և եկեալ պատմեցին. և մեք ձեռս ի վեր ամբարձեալ՝ օրհնութիւն և փառս տուաք օրհնելոյն յամենայն արարածոց՝ ամենասուրբ Երրորդութեանն »:

Բայց ցաւալին այն է՝ որ երկու տարի միայն պաշտօն կը վարէ կիւրակոս, վասն զի մի քանի հոգի անվաւեր հրատարակելով ընտրութիւնը, իրեն տեղ զրբն Գրիգոր Մակուեցին. այդ պատճառաւ շատ ցաւելով թուլմաս Մեծոփեցին, մեղաղբութեամբ և ողբալով կ'աւարտէ պատմութիւնը:


Գրիգոր Մակուեցին աթոռոյն նորոգութեան միջոց փոյթ ըրաւ ապահովելու միարանութեան և սպասաւորներու տնտեսութիւնը, այդ պատճառաւ զնեց վաղարշապատ տւանը կամ անոր եկամուտները, ինչոքս նաեւ իր յաջորդները ուրիշ զիւղեր։ Այս միջոցները չեն յիշուիր եղած ու և է շինութիւն կամ նորոգութիւն վանաց և եկեղեցւոյն վրայ։ Թովմաս Մեծոփեցին սկսեալ մինչեւ Առաքել Դավրիմեցի 200 տարւոյ ժամանակ, ազգային պատմիչ մը չունենալով, անյայտ կը մնան մեզ տեղւոյս զէպքերը, ինչոքս նաեւ ուրիշ շատ եղելութիւններ։ մինչեւ Ժէ գարու սկիզբը՝ Շահաբասի աշխարհակալութեան միջոց, որ մինչ հայրապետական աթոռը ծանր պարագի տակ ընկնուած էր, Այրարատ նահանգին հետ անոր ալ աիրեց։ Երբ 1629ին, Մովսէս Գ Այսեցին հասարակաց հաւանութեամբ կաթողիկոս եղաւ, քիչ տարուան մէջ աթոռը պարտքերէն ազատեց և սկսաւ ու ըրաւ շատ նորոգութիւններ թէ՛ վանքի և թէ եկեղեցւոյ վրայ։ իրեն արժանաւոր հետեւողները և անմիջական յաջորդները Փիլիպոս Ա և Յակովը Գ, զրեթէ բոլորովին նոր կառուցին ամբողջ շինուածքը, և պակասներն ալ շինեցին կամ փոխեցին յետագայ կաթողիկոսներն Եղիազար, Նահապետ և աւելի Պազար ու Այմեռն, և զրեթէ հարիւր յիսուն տարի տեւեց (1629–1880) Էջմիածնի ամբողջական շինութիւնը։ վերջը եղած շինութիւնները մինչեւ Մակար կաթողիկոսի ժամանակ, յաւելուածներ կրնար համարուիլ.

**Մակար ձեռնարկեց նորոգել կաթողիկոս և վանքի մէկ մասը։**

Մովսէսի ընտրութենէն առաջ Դաւիթ և Մելքիոեղեկ կաթողիկոսներու հակառակութեան ժամանակ, 1614ին, Շահաբաս խորամանկ խորհրդով և բռնի Էջմիածնէն Սպահան փոխաղբած էր Ա. Լուսաւորչի Աջայն հետ նաեւ տասն և հինգ քարեր իջման տեղէն և Սեղանէն, երկու քարեղէն մեծ աշտանակներ, և այլն. այս ոճով կ'ուղէր Նոր Էջմիածին մը կառուցանել Պարսից մայրաքաղաքին մէջ, որպէս զի զաղթական Հայոց սիրալ որսայ և զանոնք բնիկ կաթողիկոսն ուժացընէ. քարերը պահուեցան կամ ազուցան Նոր Զուղայի եկեղեցիները, իսկ հին Էջմիածինը փոխանակ աւերման, սկսաւ վերանորոգուիլ Մովսէսի գալուտեամբը։ Ականատես պատմիչն Առաքել, հետեւեալ կերպով կը նկարագրէ կաթողիկէի վիճակը. «Ամենիմը ունայնացեալ էր ի ստացուածոց և կողոպտեալ ի զարդուց. ոչ զիբը, զի ոչ էր անդ ժամասացութիւն կամ ընթերցումն, ոչ զգեստ և ոչ

շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ, մինչ զի Քրիստոսի իջման տեղն և սուրբ սեղանն ոչ ունէին զծածկոցո... և մեծամեծ լուսամուտքն զորս ունի՝ ամենն ի բաց կայր առանց վանդակի, ուստի մասեալ ի ներքս թոշոնքը լնուին զեկեղեցին ծրառվք, ծղովք և այլօք զոհիօք, զոր ամենայն աւոր հարկիւ սրբէաք... իսկ արտաքուստ կուսէ զլուխ կաթու զիկէին և տանիքն ամենայն և երեսք որմոցն՝ քանդեալք և քարինքն թափեալք, և որմոց յատակաց վէմքն փշրեալք և ծակոտեալք, և որ... շուրջ զեկեղեցեաւն շինութիւն եղեալ էր՝ և զարձեալ աւերեալ և ի վերայ միմեանց փլուզեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն և մոխիքն, որ յամենայն կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն, և հողն եկեալ և ծածկեալ էր զհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն որք կան արտաքուստ կողմանէ... Ասացեալ բանքս որք ի մէնջ՝ ցուցանեն զտեղին անբնակ զոլ ի մարդկանէ, և ասեմ զիսկն, ոչ էր ամենեւին անբնակ, այլ զու համարեաց իբրև զանբնակս, վասն զի կաթուզիկոսունքն անդ յէջմիածին ոչ բնակէին այլ յԵրեւան քաղաքի ի կաթուզիկէ եկեղեցւոյն... բայց սեւազլուխք ոմանք սինլքորք և զոհհիկք, որպէս զզեղական հողագործո որք վարձնորդիք մշակօք բնակէին յէջմիածին, և զաւորս տարւոյն զբազումս ի զեղորայսն անցուցանէին բան թէ յէջմիածին»: Այս վիճակին մէջ էր երբ Մովսէս եկաւ և աւերակները մաքրելով կարկատեց տաճարին որմերը և տանիքը. և յետոյ հողազանդ քառակուսի պարսպով պատեց. «Եւ ապա ի մէջ պարսպին յարեւմտեան կողմն զդարպաս և զտունս ի պէտո ինքեանց և հիւրոց, և ի հիւսիսային կողմն և յարեւելեան կողմն՝ շինեցին խուցս ի բնակութիւն միաբանից. և ի հարաւային կողմն շինեցին զԱկանատուն, զՓռնատուն, զՃնուետուն և զՀամբարանոց ցորենոյ և այլոց նիւթոց: Եւ ամենայն շինուածքու այսոքիկ՝ միայն պարիսպն ի հողոյ եղեւ շինեալ. իսկ այլքն ամենայն լիսեալ քարիւ և թրծեալ աղիւսով և կրով և բռով շինեցին, զեղեցիկ և վայելուչ յօրինուածով»: Մովսէսի աշակերտն և Յովհաննավանից առաջնորդ Զաքարիա վարդապետը, մէկ խօսքով կը բովանդակէ անոր շինուածքին զովեստը, բսելով. «ԶԱՅՈՒՍՈՍ սուրբ ի վեր առեալ՝ հաւասար արար երկնից»: Մովսէս իր այս բոլոր շինութեանց և նորոգութեանց ծախքերն հայթհայթեր է ազգին երեւելի և կարող անձանց յօժարակամ նուշըներով: Պարսից և Օսմանցւոց պատերազմի երեսէն աւերած կամ երկրաշարժէ վնասուած և Մովսէսի պակաս թողած փայտէ շինութիւնները կը նորոգէ յաջորդ Փիլիպպոս կաթուզիկոսը. «բազմաերկ վաստակօք զամենայն շինուածոն վերստին շինեաց»: բովանդակի սրբատաշ քարերով բաց ի գմբէթէն, սալայատակից նաեւ եկեղեցւոյ

ըրջապատը, և միաբաններու սենեակներու առջեւ չորս կանգուն լայնութեամբ։ Նոյնպէս սեղանատան մէջ քարէ շինեց հացկերութիւն սեղանը և նստարանները։ Այս շինարար կաթողիկոսը ուրիշ շատ յիշտակաց արժանի զործեր եւս ըրաւ։ Երկու ձիթահանք շինեց պարսպի հարաւային կողմը, Յովհաննու վանքի մէջ եղած զպրատունը հան փոխազրեց, Ապա-



Ա. ԵՀՄԻԱԾՆԻ զանգակատունը։

Հանէն Ա. Լուսաւորչի Աջը զարձուց, նոյնպէս Զէնկիի առուն բացաւ Աեւանայ ծովին Հրազդան գետ և Արագած լեռնէն բղխող գետակ մը Քասազի հետ միացուց, յետոյ զործով կ. Պոլիս և Երուսաղէմ գնաց և վերադառնալով, 1654 թուին սկսաւ տաճարի արեւմտեան դրան առջեւ քանդակներով զարդարուած զանգակատան շինութիւնը, Անտոն չեղակի Ապրօեանի ծախքով, և զեռ չաւարաւած վախճանեցաւ։ Ասոր աշակերտն ու յաջորդը



Ա. Եղմիածնի զանգակառան ստորին կամ Աւագ դռւուը:

Յակոբ կաթողիկոս վերջացուց շնորհ վայելչաձեւ զմբէթով և անուանեց Հրեշտակապետ . եռայարկ է և միջնայարկին մէջ կայ խորան և սեղան : Վերէն վար արտաքին կողմը հիանալի և սքանչելի քանդակներով զարդարուած է . վերի կամարագլուխներու երեք կողմերը քանդակուած են երեք պատկերներ , արեւմտեան կողմն Յիսուսի պատկերը , որ իր տջովը կ'օրհնէ մենաստանը , հիւսիսային կողմն՝ Տրդատայ արքայական պատկերը , իսկ հարաւային կողմը , Ա . Գրիգոր լուսաւորիչ՝ հայրապետական զգեստով : Գմբէթն սրածայր է ութը սիւներու վրայ . ներքուստ կայ շինութեան արձանագրութիւնը և աւարտած տարւոյն թուականը , որ է 1657.

Ի թագաւորութեան Պարսից Շահապասի , նաեւ ի նայրապետութեան Տեառն Փիլիպպոսի , Թուլն Ո՞ՃԳ . նիմնարկեցաւ . (Եւ ի ձեռն) Տեառն Յակոբայ Զուղայեցւոյ , Ո՞ՃԶ , աւարտեցաւ Զանգակատունս . ծախիւք Աստոն Պարոն ԶԵՍպիին . ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ :


Զանգակատան շինութեան ուրիշ արձանագրութիւն մ'ալ կայ եկեղեցւոյ գրան բարաւորին վրայ , այսպէս .

Շնորհիւ Աստուծոյ եւ օժանդակութեամբ սրբազն կաթուղիկոսաց Փիլիպպոսի եւ Յակոբայ նրաշակերտեցաւ Զանգակատունս եւ ծաղկեցաւ ի ԹՎ . Ո՞ՃՃԳ :


Կայ նաեւ Աստուծատուր կաթողիկոսի հետեւեալ յիշատակարանը , մեծ զմբէթի շրջապատին ներբին կողմը .

Ի Թուականութեան հայկական Ո՞ՃԿԹ . Ես Տէր Աստուծատուր Համատանցի կաթուղիկոս ամենից Հայոց ետու նորոգել զջորեսին խախտեալ սիւնքն սրբոյ եկեղեցւոյս , եւ զբոլը եկեղեցին նորոգեալ եւ ծաղկեալ հանդերձ մարմարոնեայ շինուածովք որ ի մէջ սրբոյ եկեղեցւոյս են . յիշատակ հոգւոյ իմոյ , ի վայելումն տառապեալ ազգի Հայոց , եւ աստ ի սուրբ ամոռու զետեղեալ միաբանից : Եւ որք ընթեռնուք զարձանս զայս յիշեցեք զիս ի մաքրափայլ յաղաւթս ձեր . եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի . ամէն :

Էջմիածնի զանգակատան մէջ կայ Թիսկէթեան հոչակաւոր զանգակ մը , որուն վրայ կայ թիսկէթերէն արձանագրութիւն մը : — Զանգակատան



գմբէթի նման և աւելի պարզ է մեծ կաթողիկէն կամ տաճարի գմբէթը ,  
12 լուսամուռներով և սիւնազարդ , շուրջը վանդակապատով , բարձրացած  
է չորս հաստ սիւներու վրայ , որոնք նորոգուած են Աստուածատուր , Ար-  
մէռն և Դուկաս կաթողիկոսներէն , ինչպէս կը յայտնեն վարի արձանա-  
զրութիւնները :



Թիպեթերէն զրուած զանգակի:

Նորոգեցաւ սիւնս մինչեւ ի վերին կամարն հոգաբարձութեամբ Տեառն  
Սիմէռնի սրբազն կաթողիկոսին ամենայն Հայոց . արդեամբք Երեւանու  
Բլրցի ի Քրիստոս հանգուցեալ Եաղուբի որդի Մէլիք Միհասին , ի յիշա-  
տակ իւրեանց եւ խրայնոցն . ի ՈՄԻԶ Թուոջս :


Նորոգեցաւ սիւնս ... արդեամբ Զուղայեցի եւ ի Վան բնակեալ ի  
Քրիստոս հանգուցեալ Տէր Յունաննէսի որդի Տիրացու Մտեփաննոսին , ի  
յիշատակ իւրեանց . ի ՈՄԻԶ :

Նորոգեցաւ սիւնս մինչեւ ի վերին կամարն հոգածութեամբ Տեառն  
Գուկասու սրբազն կաթողիկոսին ամենայն Հայոց , արդեամբ Ացուեցի  
Պապայեան մահտեսի Կարապետին , ի յիշատակ իւր , եւ կենակցին մահտեսի  
Եղիսաբեթին , եւ որդւոյն մահտեսի Հայրապետին , եւ համայն կենդա-  
նեաց եւ ննջեցելոցն . ի ՈՄԻԵ Թուին :

Նորոգեցաւ սիւնս մինչ ի վերին կամարն հոգածութեամբ Տեառն  
Գուկասու սրբազն կաթողիկոսին , արդեամբ Կեսարացի մահտեսի Խը-  
տըրին , ի յիշատակ ինքեան եւ ծնողացն՝ Աքրանամին եւ Աննային , եւ  
եղբօրն մահտեսի Պետրոսին , եւ որդւոցն՝ Պողոսին , Սերօբէին , Յակոբին  
եւ Աքրանամին , եւ այլ կենդանեաց եւ ննջեցելոցն . ի ՈՄԻԵ Թուին :

**Մեծ կաթողիկէին ճիշտ ներքեւը կայ քառասիսն փոքրիկ կաթողիկէ**  
**մըր , զոր նախ 1684ին շինեց Եղիսաբար կաթողիկոսը , հանդերձ պատա-  
րազի սեղանով Իջման տեղւոյն վրայ՝ որուն վէմը տարած է Շահարաս ,**  
**և շուրջը քարեայ բարձրաւանդակ շինեց՝ որպէս զի սեղանը ամենուն տես-  
նուի . յիսոյ Աստուածատուր կաթողիկոսը վերստին Իջման տեղւոյն վրայ ,**

վայելչագոյն շինեց կաթողիկէն կճեայ սիրուն սիւներով . իսկ Աքրահամ Բ կաթողիկոսը պղնձեղէն զրուագեալ վանդակներով սեղանը շուրջանակի



Ա . ԵԶՄԻԱԾՆԻ ՍԱՋԱՐԻ մէջ ԿԸՄԱՆ սեղանը :

սպատեց , երկբացիկ դռներով արեւմտեան և Հարտւային կողմերէն , արեւմբանին վրայ զրելով 1732 թուականաւ հետեւեալ յիշատակարանը .

Ի թուին ՈՃԶԱ. ի հայրապետութեան Աքրանամ կաթողիկոսի եւ հոգաբարձութեամբ նորին շինեցաւ շրջապատ ճաղերս Իջման տեղւոյն Քրիստոսի գեղեցիկ շինմամբ. Յիշեցէք ի ՏԵՐ:

**Խոկ միւս զրան վրայ Միքայէլ Կարմեցի պղնձազործը զրած է իր յիշատակարանը:**

Եղիազար կաթողիկոսը շիներ է տանիքի երեք՝ հարաւային, արեւելեան և հիւսիսային կողմերը զանգակատան նման փոքրիկ զմբէթներ 1682 թուին: Իջման տեղւոյ սեղանէն զատ եկեղեցւոյ մէջ կան ուրիշ վեց սեղաններ, որոնց ամենահինն է Աւագ սեղանը, շինուած բեմի վրայ արեւելակողմը Շողակաթ Ա. Աստուածածին կոչուած, որուն անուամբ եւս կը կոչուի տաճարը: Հին ատեն կաթողիկէ անուամբ ծանօթ էր և հիմնուած կը ճանչցուի Ա. Գրիգոր Լուսաւորչէն, ուր և ինքն կը սղատարագէր. ասոր վէմը տարաւ Շահարաս և այժմ կը գանուի Նոր Զուզայի մէջ: Սեղանիս խաչկալը ոսկեզօծ է Միածնի իջման պատկերով, փայտաշէն քանդակուած և նուիրուած Զմիւռնիացի ճարտարներէ, և ունի այս յիշատակարանը.

Յիշատակ է Իջման տեղւոյս Խզմիրցի Աքրանամ ամիրային. Շնորհաւք ամենազաւրին Աստուծոյ, որ ի հայրապետութեան Տեառն Աստուածատուք կաթողիկոսի ամենայն Հայոց կազմեցաւ եւ ծաղկեցաւ Խաչկալս ի մայրագագին Խզմիր. արդեամբք քահանայից եւ Ժողովրդոց արեւելականաց եւ արուեստականաց, մեծ եւ փոքր վաճառականաց. եւ եղաւ յիշատակ ի մեծ սեղանն Առւըք Էջմիածնի. հոգաբարձութեամբ Խզմիրու առաջնորդ Սիմէոն վարդապետին Երեւանցւոյ:

Ուրիշ կերպով զրուազուած էր Խորանին ճարտարուեստ հին զուոր, զրեթէ նոյն ժամանակները, որուն պատկերը կը զետեղենք աստ: Խորանին ճակատը կայ մեծ լուսամուտ, ինչպէս նաեւ որմերու վրայ երեսնի չափ պատուհաններ, բայց անոնցմէ շատերը զոցուած լինելով եկեղեցին քիչ լոյս ունի: Երրորդ և չորրորդ սեղանները են Իջման տեղւոյն աջ և ձախ կողմերը՝ տաճարին լայնութեան երկու թեւերու մէջ, զորս կանգնեց Եղիազար կաթողիկոս, յատակը բարձրացընելով. հարաւայինը Ա. Յովհաննեան Կարապետի անուամբ՝ և 1684 թուականաւ հետեւեալ յիշատակարանով.

Յիշատակ է Առւըք Յովհաննէս խորանս ՏԵՐ Եղիազար կաթողիկոսին. Թուին ՈՃԼԳ:



Ա. Եջմիածնի խորանին հին դռւոք:

**Հիսոխայինը Ա. Ստեփանոսի նուիրուած է և ունի նոյն թուականաւ և ոճով արձանագրութիւն.**

Յիշատակ է Սուրբ Ստեփանմտսի սեղանս ՏԵՐ Եղիազար կաթուղիկոսին, Թուին ՌՃՂԴ:

**Հարաւային սեղանոյն վրայ սովորաբար կը պահուի ապակաղարդ զզրոցի մէջ միջակ կաթոայն սուրբ Մեսոնով։ Եպիսկոպոսական ձեռնազրութեան ժամանակ հոս կը շարուին եպիսկոպոսները և այլ եկեղեցականներ՝ զզեստաւորեալ, ներկայացընելով եկեղեցական եօթը դասը, այն է՝ երկու քահանայ, երկու սարկաւագ, երկու կիսասարկաւագ, երկու չահընկալ, երկու դպիր և երկու գոնապան, երկու իշխան և երկու աղքատ, իրրեւ վկայք արժանաւորութեանց նոր եպիսկոպոսի և անոր վիճակի ժողովրդի համաձայնութեան և հաճութեան։ Հիսոխային խորանը եօթն և հարաւայինը երեք աստիճան բարձր են։ Հինգերորդ և վեցերորդ սեղանները աւագ սեղանին աջ ու ձախ կողմերն են, մին Ա. Յակովայ և Յովհաննես առաքելոց և միւսն Ա. Գրիգոր Լուսաւորչի. ասոնց բեմն ալ եկեղեցւոյ սովորական յատակէն բարձր է. ձեղունները կամարակապ և փայտակերտ են, զրուագեալ և նկարուած. այս սեղանները կանգնած է Արքահամ Բ, որոն արձանագրութիւնն կը տեսնուի Ա. Յակովեայ սեղանոյն հարաւային կողմը, 1733 թուականաւ.**

**Հրաշակերտեալ տաճար փառաց  
Վասն զենման Գառլին կենաց,  
Ի փրկութիւն մարդկան մեղաց,  
Յանուն երկուցըն Յակոբեանց,  
Եղբօր Տեառն եւ Արումանց.**

**Աքրանամու վեհին արդեանց  
Ի վայելումն Հայոց ազանց.  
Ի ներ Թուոջ մերում ազանց  
ՌՃ ութսուն եւ երկուց.  
Թուին ՌՃՂԲ:**

**Աւագ բեմին և երկու սեղաններուս մէջ տեղ կան երկու աւանդատուններ, որոնց տանիքը նորէն շինեց Ախմէոն կաթողիկոս, ամրող տաճարի տանիքը նորոգելու միջոց. ինչպէս կը յայտնուի արտաքուստ մեծ պատռահանին ներքեւի 1771 թուականաւ արձանագրութենէն.**

**Աստուծով նորոգեցաւ բոլոր տանիք սրբոյ տաճարիս եւ երկուց խորանացն իսկ ի ներքուստ եւ արտաքուստ, նոգաբարձութեամբ Տեառն**

Ախմէնի սրբազն կաթողիկոսին Երեւանցոյ . եւ աշխատափռութեամբ  
լուսարար Գրիգոր վարդապետի Եղվարդեցւոյ . ի ՈՄԻ Թուվն մերոյ : —  
Վարպետ Գասպար :



Տ. Տ. Եփրեմ Ա. Կաթողիկոս :

Անցեալ զարու սկիզբը սրատերազմերու միջոց խախտեցան տանիքները  
և Եփրեմ կաթողիկոսը կրկին նորոգել տուաւ կոփածոյ քարերով , զրելով  
հաեւ սատարողներու յիշատակը կաթողիկէի և զմբէթի վարը , հետեւեալ  
կերպով .

Այս ներքին դասուն տանեաց նորոգութիւնն է արդեամբ ի Ղզլար բնակեալ ազնիւ Աղայ Յակոբի Գալստեան ի յիշատակ կենովանեացն եւ ննջեցելոց. ի ՌՄԿԵ թուն.

Այս վերին դասուն նորոգութիւնն է արդեամբ ազնիւ Աղայ Մարկոսին Թառումեան, ի յիշատակ կենովանեաց եւ ննջեցելոցն. ի ՌՄԿԵ:

**Եօթներորդ սեղանը նուիրուած է Գալրիէլ և Միքայէլ հրեշտակապետաց, և ինչպէս կանխաւ ըսինք, կը զանուի զանգակատան երկրորդ յարկը։ Երկու աւանդատուններէն մին կը ծառայէ իբրեւ նշխարատուն և զանձարան սուրբ մասանց և սպասներու։ Եջմիածնի բազմազարեան և հոչակաւոր Մայր Եկեղեցւոյ հոյակապ ու գեղեցիկ զարդարուած թանգարանին մէջ կը սպահուին հետեւեալ սրբութիւնները։ Ա. Գեղարդն՝ որ առաջ Այրի վանքը կը պահուէր. հրաշագործ պատկեր Յիսուսի՝ Ամենափրկիչ կոչուած՝ որ փորագրուած է փայտի վրայ Ա. Յովհաննէս աւետարանչի ձեռքով. Կենաց Փայտի մասնիկներ. Աջ և զագաթն Ա. Թաղէսս առաքելոյն, Ամենափրկիչի վանքէն բերուած։ Ճկոյթ և աստմն Ա. Պետրոս առաքելոյն։ Աջ Ա. Մատթէոս աւետարանչի. Մասունք Ա. Յովհաննու կարապետի, Ա. Անդրէսս առաքելոյ, Ա. Մարկոս աւետարանչի, Ա. Նիկողայոս սքանչելազործի և Ա. Գէորգ զօրավարի. Գագաթն Ա. Հոփիսիմէի և մասունք Ա. Գայիանէի. Աջ Ա. Գրիգոր Լուսաւորչի և երկու երկաթէ քերիչներ և ուրիշ զործիքներ՝ որոնցմով չարչարած են մեծ նահատակը. Աջ Ա. Արիստակէսի, Աջ Ա. Յակով բայ Մծրնայ Հայրապետի և Նոյեան տապանի մասնիկ մը, զոր հրեշտակի ձեռքով ստացաւ Արարատայ վրայ, արծաթէ տապանակի մէջ զրուած, զոր շինել տուած է 1698ին Գեղարդայ վանքի Գաւիթ վանահայրը, ինչպէս կը յայտնէ վրայի հետեւեալ յիշատակարանը.**


Կաման Աստուծոյ ես մեղսամած եւ գծուծ Գաւիթ անարժան նաըեղէս Պուշեցի, տեղապահ վանիցս Սուրբ Գեղարդայ, շինել ետու եւ գոյնզգոյն օրինվածօք զարդարեցի զպահարանս Նոյեան տապանիս փըրկագործ սուրբ տախտակիս, որ այժմ կոչի Սուրբ Յակոբ. յիշատակ ինձ եւ իմ ծնողացն եւ ամենայն արեանառու մերձաւորաց. եւ որ շատ եւ որ սակաւ արդիւնք ունիցին այսմ պահարանիս՝ տէրն Քրիստոս նատուացէ ի միւսանգամ գալստեանն. ամէն։ Եւ որ ոք կամեսցի համել վանիցս սուրբ Գեղարդայ, կամ գրաւ դնել ազգայնոցս եւ այլոց, զանէծս կայենայ եւ Գաղամայ եւ խաչահանվացն առցէ, եւ սեւերես գտցի. ամէն։ Շինեցաւ ծեռամբ Քանաքեռցի մեղսապարտ ոսկերիչ Աւետին. Թվ. ՌՃԽԵ։



Ա. Էջմիածնի թանգարանի ճակատը:


Հրաշագործ խաչ Գետաղարձ Պետրոս կաթողիկոսի, որով նա Աերաստիոյ մէջ ջրօրհնէքի ժամանակ, 1017 տարւոյ յունուար 6ին, զետին ընթացքը ետ դարձուց . կան նաեւ այլ և այլ մասունք՝ արծաթի, ոսկի տուփերու, աջերու և խաչերու մէջ՝ թանկագին քարերով զարդարուած : Ապակեայ զարաններու մէջ շարուած են զանազան հնութիւններ, հին զգեստներ, զբաններ, կաթողիկոսներու շքանշաններ, եկեղեցական զարդեր, հին թանկագին ոկիններ, և այլն : Կան բազմաթիւ ականակուռ միթրներ, որոնցմէ մին կը համարուի Լուկիոս Գ քահանայակետին առ Գրիգոր Տղայ դրկածը 1184ին: Այս անգին և պատուական հնութիւններէ շատերը Գէորգ Կ կաթողիկոսի օրով հաւաքուած են. թանգարանի շէնքն ալ նոյն կաթողիկոսը կառուցած է տաճարի կից՝ արեւելակողմը, որուն ճակատի պատկերը կը զնենք աստ: Այս անգին սպասուց և որբութեանց վրայ փափաքողները կրնան աւելի մանրամասն տեղեկութիւններ գտնել, Շահիսաթունեանի զրքի Ա հատորի մէջ: Զգեստներու մէջ աչքի կ'իյնայ նուրբ ասեղնազործութեամբ և խորհրդաւոր նկարներով շուրջառ մը՝ Զինաստանի մէջ գործուած և Հնդկաստանէն բերուած Վրթանէս եպիսկոպոսի ձեռամբ: Ծնթերցողները մեր պատկերէն կրնան զաղափար մը առնուլ այդ շուրջառի, որուն մէջ տեղը նկարուած է Ա. Էջմիածնի վանքը, շուրջը շառաւիղաձեւ ճառագայթներ արձակած և խրաքանչիւր ճառագայթի վրայ մէկ մէկ հրեշտակ . իսկ վերի մասը նկարուած է արեւ և լուսին . զանգակատան միջին կամարը նստած է Ա. Աստուածածին Յիսուս մանուկը գրկած : Ա. Ստեփանոսի և Ա. Յովհաննու կարապետի խորաններու վերին և ներքին կամարներու մէջ նկարուած են չորս աւետարանիչները. իսկ անոնց քով կողմնակի թագէսս և Բարդողիմէսս առաքեալները : Վանքը պարսպապատ է և հարաւային գոնչն կախուած է սանդուղ մը, որ կը ներկայացնէ Յակոբ նահապետի տեսիլքը . իսկ հիւսիսային դրան մէջ նկարուած է հայրապետ մը ոսքի վրայ, որ թերեւս ըլլայ Ա. Լուսաւորիչը : Էջմիածնէն վար կը տեսնուի Մասիսը Նոյեան տապանով, որուն աջ կողմը ձեռնամած ծնկի եկած են Տրդատ, Աշխէն և Խոռորդիդուխտ և կողմնակի կը ներկայանայ նաւ մը՝ մէջը Յիսուս իր աշակերտաց հետ ալէկոծեալ ծովի վրայ . Ճախ կողմը Յակոբ Ամծրնայ հայրապետը հրեշտակէն կ'ստանայ տապանի մէկ մասը . կողմնակի երկու հոգի ուսերու վրայ բարձած կը տանին ողկոյզ մը և ասոնց կողքին՝ Յիսուս կը փրկէ Պետրոսը ընկղմելէ : Մասիսի ճիշդ կեզրոնը կայ խորհրդաւոր արծիւ մը : Շուրջառի աջ և Ճախ կողմերը նկարուած են Հոփիսիմէ և Գայիսանէ կոյսերը իրենց վկայարաններով, մին ձեռքը բռնած խաչակիր զաւազան մը և միւսն հովուական:

Ա. Կըմբածնի Հոգիառանէն բերուած տօնվագործ պաշտամական



Եջմիածնի թանգարանը փակուած է երկաթեայ դռնով, որուն բանաւիները երեք են և կը գտնուեն մին կաթողիկոսի մօտ, մին գանձապետի և մին սիւնհոգական անդամներու մօտ, առանց այս երեքին բացուիլը անկարելի է։ Տաճարի մէջ կան երկու կաթողիկոսական աթոռներ, մին՝ ընկուզի փայտէ շինուած, շատ զեղեցիկ քանդակներով, և ունի փոքրիկ զմբէթ՝ հինգ փոքրիկ կաթողիկէներով, աւանդաբար կը պատմուի թէ Հոռվան ընծայ զրկուած է։ միւս աթոռն ալ ընկուզի փայտէ է բայց աւելի ընդարձակ, զարդարուած է մանր սատափներով և կրիայի ոսկրի կտորներով։ ասոր բոլորաձեւ զմբէթը հաստատուած է չորս բարակ սիւներու վրայ և ունի չորս փոքրիկ կաթողիկէներ, վրան կայ հետեւեալ յիշատակարանը։ (Շինեցաւ Պատրիարքարան ի յիշատակ մահտեսի Միմասի որդի Սեղբոսին, և Կարմրակցի Նազարի որդոց՝ մահտեսի Առաքելոյն, Մարտիրոսին և Յարուրինենին ամենայն զարմից նոցին. բուժին ՈՃՀ. ի հայրապետուրեան Տեառն Աստուածատրոյ սրբազն կարողիկոսին ամենայն Հայոց, և նողաբարձուրեամբ Տէր Յովհաննէս և Տէր Պետրոս վարդապետաց)։

Տաճարի բոլոր ներբին որմերը և առաստաղը ներկուած են Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, 1686ին, Յովսաթան ճարտարին ձեռքով. նկարներն են սրբոց պատկերներ, զանազան արաբական զարդեր, ծաղիկներ, թուշուններ, են. այս նորոգութեանց յիշատակարանը գրոշմուած է մեծ կաթողիկէի սատրին շրջապատի խարլուին վրայ.



Ա. Եջմիածնի կաթողիկոսական զահ։

Ի թուին ՈՃԼԵ. Շնորհիւն Աստուծոյ Տէր Ղուկաս կաթողիկոս վերըստին նորոգել ետու զխախտեալ երկուս սիւնս սրբոյ տաճարիս, ապա եւ զբոլոր մէջս սորին որ անշքացեալ էր՝ նորապէս բռեալ ծաղկեցուցի

հանդերձ խորհրդաւոր պատկերօք, իմս գոյիւք ստացելովք ի յօրինեալ ժողովրդոց մերոց. ի յիշատակ ինձ եւ իմոցն, ի վայելս ազգի Հայոց եւ միաբանից սրբոյ աթոռոյս. Արդ ինդրեմ ի վայելողացդ յիշել զիս յարժանահայց յաղօթս ձեր առ Աստուած. յորմէ եւ դուք յիշեալ լիջիք. ամէն:

**Կան նաեւ կտաւի վրայ նկարուած բաւական թուով որբոց պատկերներ, շատերը Ստեփանոս Լեհացիին և նաղաշ Յովեաթանէն նկարուած. Հատ մ'ալ դրկած է Քէր Փորթըր Անդլիացի ուղեւորը, որ հիւրասիրուած էր Եփրեմ կաթողիկոսէն, և կը ներկայացնէ Յիսուս՝ մանուկները օրհնելով։ Տաճարը ունի երեք դռւո, զլիսաւոր դռւոր արեւմտեան կողմը զանգակատան ստորին յարկի մէջ է. միւս երկուքը՝ որ առաջինէն աւելի փոքր են, հիւսային և հարաւային պատերու մէջ են։ Կայ նաեւ ուրիշ դրան մը տեղը Ա. Լուսաւորչի սեղանին մօտ, որուն համար աւանդաբար կ'ըսուի, թէ միայն կաթողիկոսներու, թագաւորներու և անոնց ընտանեաց համար եղած է։ Եկեղեցւոյն արտաքին կողմերը և երեսները պարզ և անպանոյն են. հիմքերու մօտ շուրջանակի կը պատեն երեք սանդղաձեւ աստիճաններ, որոնցմէ վեր որմերու ստորին մասը չորս կարգ քարով նորոգած է Ղուկաս կաթողիկոսը, ինչպէս կը յայտնէ 1784 թուականաւ արձանագրութիւնը.**

Օգնականութեամբն Աստուծոյ նորոգեցան ներքնաշարեալ չորս կարգ քարինքս բոլոր որմոց լուսանկար սրբոյ տաճարիս, հոգաբարձութեամբ Տեառն Ղուկասու սրբազն կաթողիկոսի ամենայն Հայոց, արդեամբ Ակնայ Ապուչելիցի եւ ի Կոստանդնուպօլիս բնակեալ ի Քրիստոս հանգուցեալ մահտեսի Յովիաննէսին եւ այլ ամէն իւրայնոցն. Թուին ՌՄԼԳ։

**Դարձեալ դէպ ի վերով խաչքարի մը վրայ արձանագրուած է հետեւեալը.**

Սուրբ Խաչս աստէն արձան դնի  
Միջնորդ առ տէրն նամայնի,  
Վասն Ղուկասու նայրապետի

Սուրբ տաճարիս բազմաշխատի,  
Զոր ի ներքուստ եւ արտաքուստ  
Շքեղաշուք նորոգողի։

Որմերու ստորին կողմերը շատ անզամ նորոգուած են, այդ պատճառու աւելի հին են որմերու վերին կողմերը։ Տաճարի շուրջ եղած ընդար-

Ճակ բակերը նախ սալարկեցան Յակովը կաթողիկոսի ժամանակ 1658ին, արդեամբ Յովհաննավանից առաջնորդ Զաքարիա Վաղարշապատեցոյն, որ շատ նախանձաւոր էր Եջմիածնի շինութեան. ոս 1659 թուին վախճանելով թաղուեցաւ զանգակատան առջև արեւմտեան կողմը, իրմէ պատրաստած տապանի մը մէջ : Հարիւր քսան և եօթն տարի վերջ Ղուկաս կաթողիկոսը նորոգել տուաւ այս սալայատակը և իր յիշատակարանն զրեց աւագ դրան հիւսիսակողմը.

Կամաւն Աստուծոյ նորոգեցան սրբոյ տաճարիս շուրջանակի սալայատակըն, նոգաբարձութեամբ Տեառն Ղուկասու սրբազնն կաթուղիկոսին, ծախիւք ի Սուրբաթ բնակեալ Գերաքեանց բարեպաշտ Յօհաննէան Աղային վասն նոգւոյ իւրոյ եւ իւրայոցն, նօրն Յակոբին եւ մօրն Մեհրաբանին, եւ նոցին ծնողացն Գերաք Աղային եւ Թագուհւոյն, Աղամալին եւ Վալիտային, եւ եղբարցն Աւետիքին, Գերաքին եւ Աքրանամին. եւ քերցն՝ Ազիզին, Թագուհւոյն եւ Խաթունին. եւ կնոջն Կիւլիստանին, եւ դստերացն Վալիտային եւ Թիրվանատային. եւ այլ կենդանեաց եւ ննջեցելոցն, որոց յիշատակն օրմնութեամբ եղիցի. **ԱՄԼԴ** Թուին:

**Աւագ դրան հարաւակողմն ալ կը տեսնուի Տփղիսեցի կրտակաւոր և բանուոր նուիրատուաց արձանագրութիւն մը՝ 1682 թուականաւ.**

Կամաւն Աստուծոյ մեք Թիֆլիզու ամենայն ասմաֆ եւ դուքանտար խոստացաք տարէնն ամէն դուքան մէկ մէկ չարէք մում տալ Սուրբ Եջմիածնայ. եւ միաբանք Սուրբ Աթոռոյս խոստացան հինգ նաւակատեացն զմեզ պաշտամամբ եւ պատարագօք յիշատակել. ի թուին ՌՃԱԱ, ի նայրապետութեան Տեառն Եղիազարու:

**Գլխաւոր դրան առջեւը և երկու կողմերը թաղուած են առանձին տապաններու մէջ կաթողիկոսներէն ոմանք. ինչպէս, Աղեքսանդր Ա, որ ունի հետեւեալ տապանագիրը.**

Հազար հարիւր ԿԳ. Թուին վախճանեցաւ Տէր Աղեքսանտը կաթողիկոս ամենայն Հայոց, եւ եղաւ յայսմ դամբարանի. միով Տէր ողորմեայիւ յիշել զձեզ աղացէ, ով նամդիպողք բարի:

**Աղեքսանդր Բի տապանագիրն ալ հետեւեալն է.**

Քրիստոս որդի Հաւը Միածին  
Դատող ընտւթեանս մարդկային  
Յորժամ փառօք գայցես կրկին՝  
Յիշեա ողորմութեամբ քոյին  
Զիայրապետն մեր զիոգելին՝  
Զտէր Աղէքսամոդը Բիւզանդացին։  
Արժանաւոր սրբոյ գնդին,

Յարբայութիւն մոյծ երկնային։  
Որ արդ նանգեաւ ըստ քում բանին,  
Աստէն եղաւ մարմին նորին։  
Հազար եւ երկերիւր ամին,  
Չորրորդ եւս ընդ սմա բարդին,  
Նոյեմբերի մետասանին։

**Հոն են նաեւ Դանիէլի, Յովհաննէս Ծի, Ներսէս Եի, Հիրիմները որոնց  
մօտ է Պարսկաստանի Անզլիացի զեսպան Մաքտոնալտի շիրիմը։ Միաբան-  
ներու զերեզմանատունն է վանքի հարաւ արեւելեան կողմը, Ղազարապատի  
մօտ։**

**Տեղոյս կաթողիկէ եկեղեցիէն վերջ նշանաւոր վայրն է կաթողիկոսա-  
րանը, որուն առաջինները Պատրիարքարան անունը կու տային, իսկ այժմ  
Վեհարան կ'ըսուի, և կը զանուի վանքի ներքին քառակուսույն արեւմտեան  
կողմը և Տրդատայ կամարակապ դրան աջ կողմը զէպ ի հարաւ։ Էջմիածնի  
առաջին նորոգող Մովսէս կաթողիկոսը նախ շինած էր նոյն կողմը՝ բայց  
զէպ ի հիւսիս։ յետոյ իր յաջորդը Փիլիպոս աւելի վայելուշ կերպով շինեց  
ներքնայարկին վրայ։ իսկ Ղազար կաթողիկոս վերստին շինեց այժմեան  
զիրքով, ընդարձակ և շքեղ, տասը սենեակներով։ հարաւային ծայրը կա-  
մարայարկ մեծ քառակուսի դահլիճ մը շինելով, որուն հիւսիսակողմը  
պատշտամ կայ, արեւելակողմն՝ սեղանատան մտից զուոր և արեւմտակողմը  
Ղազարապատ հանող զուռ մը, որուն վրայ կը տեսնուի Ղազար կաթո-  
ղիկոսի յիշատակարանը։**

Հաստին նանուըց ի ներկայումս զմեզ սիրեաց։  
Զտէր Ղազարոս զիւր սիրելին մեզ պարգեւեաց։  
Որ զսուրք Աթոռս սովիմք ձեռամբ նորոգեաց,  
Եւ հիանքաշ կերտեցելովք յոյժ զարդարեաց։  
Եւ ի պատիւ վայելչութեան Մօրըս փառաց  
Եւ ի պարծանս մերոց ազգաց Հայոց Մեծաց։

**Դահլիճն արեւելակողմը ուրիշ դուռ մ'ալ բացաւ, որ անկէ ելնէ կա-  
թողիկոսը հանգիսի օրերը սեղանատուն մտնելու համար, այս դրան վրայ  
եւս արձանագրած է նոյն կաթողիկոսը.**

Շնորհօք Արարջին քնաղ յօրինմամբ՝  
Կառուցեալ կանգնեցաւ քազմածախ արդեամբ  
Պատրիարքարանս այս գեղեցիկ տեսլեամբ,  
Մեծին Պազարու սրբազն վեհին ձեռամբ. 1190.

Այսօն կաթողիկոսը աւելցուց նաեւ կաթողիկոսի ձմերային բնակարանը՝ մեծ ու փոքր սենեակներով։ Արեւմտեան կողմի հիւսիսային մասը, ամբողջ հիւսիսակողմը և արեւելակողման մէկ մասը, միարաններու երկայարկ բնակարանները կը գտնուին. ստորին յարկը՝ բնդհանրապէս աւազ



Ա. ԵԶՄԻԱԾՆԻ միաբանութեան սենեակները։

աստիճանաւորներու, արքեպիսկոպոսներու, եպիսկոպոսներու, վարդապետներու, և այլն. վերին յարկը՝ սարկաւագներու, կղերիկոսներու և այլոց։ Հիւսիսակողման արեւելեան ծայրը կը գտնուին ծառաներու և սպասաւորներու բնակարանները։ Միարաններու ճիշդ թիւն չէ կարելի որոշել, վասն զի մերթ կը յաւելու և մերթ կը նուազի, սակայն միշտ հարիւրէ աւելի են. 1685ին Եղիազար կաթողիկոսի օրով, յիշատակդիր մը կ'ըսէ անոր համար. «Տէր Աստուած տացէ սմա յերկար կեանս. զոր (զԵԶՄԻԱԾԻՆ) վայելչազարդ վայելչացոյց, և զեղեցկազարդ պայծառացոյց զոռորք աթոռս, միարանօք մինչեւ աւելի քան զհարիւր յիսուն այր, մեծ և փոքր, սեւազուիս և եկեղեցւոյ մանկունք»։ Վանքի քառակուսւոյն արեւելեան կողմը

Ա. Կըմբածին — Գեղարքունիքի գլուխանը :



մեծ մասամբ սեփական է ուսումնարանի . վարժարանը Յովհաննավանքին յլշջմիածին փոխազրուելով , բաւական բարգաւաճեցաւ ԺԵ դարու վերջը և ԺՈՒ սկիզբը . հոն ուսաւ հայերէն դպրութիւն նաև վարդան Յովհաննեան՝ որ յետոյ Լեհահայոց եպիսկոպոս եղաւ : Ախմէսն կաթողիկոսը երկու վար-



ՀԱՅԵՑԻ ԺՈՒ

Տ. Տ. ԳԵՐՈԳ Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍ :

Ժարան շինեց ամրան ու ձմրան՝ Հիւսիսային կողմը , ուր ուսուցիչ զրուեցաւ Պետրոս Բերթուսեանց կամ Աղամալեան՝ անուանի գիտնական եպիսկոպոսը : Այս վարժարանին յետոյ տեղւոյն խոնաւութեան սկառածառաւ ձգուեցաւ և անցեալ զարու սկիզբը փոխազրուեցաւ արեւմտակողմը , Տրդատայ

դրան վերնայարկը. տարիներ վերջը (1813), Եփրեմ կաթողիկոսի ժամանակ նոր վարժարան շինուեցաւ վանքի արեւելակողմը։ Ժամանակի յառաջաղիմութիւնն և ուսմանց ու զիտութեանց բարգաւաճանքը կը պահանջէին բարձրագոյն ուսումնարան մը, և այդ նովատակի համար արդինաշատ Գէորգ Դ կաթողիկոսը, անձնական և ազգայիններէ նուիրուած մեծ գումարով հիմնեց իր անուամբ կոչուող հոյակապ Գեորգեան ձեմարամը՝ արեւելեան կողմը, մեծահանդէս նաւակատիք կատարելով 1874 տարւոյ սեպտեմբերի մէջ։ բայց զրեթէ ամիս մը վերջը (Հոկտ. 16ին) զիալուածով կրակ իյնալով տասը ժամ հրդեհելով շնչին կէսը այրեց. սակայն շուտով և արիարար վերստին շինեց. կարգեց զիտնական ուսուցիչներ զանազան ուսմանց և լեզուներու, յատուկ կանոններով և 80ի չափ աշակերտաներով, յետոյ շինեց նաև աշակերտաց ննջարան և հիւանդանոց։ Ճեմարանի հիւսիսային կողմը վերին ճակատի վրայ կայ շինութեան յիշատակարան։ — Արեւելակողման հարաւային ծայրը՝ Մոլսէս կաթողիկոսի օրէն շինուած էր հացի փուռ, զոր Փոնատուն կը կոչեն և նորոգուած է Արքահամ Բէ 1731ին։ Փոան հարաւակողմը Սիմէոն կաթողիկոս շինել տուաւ Համբարանոց, որ և այժմ կը կոչուի Օշականայ ամրար, վասն զի այն զիւղին բերքերը հոս կը պահէին, Պուկաս կաթողիկոսն ալ ուրիշ արմաեաց կրկնայարկ ամբարանոցներ շինել տուաւ, հարաւակողման արեւելեան ծայրը, Քշուկի կոչուած զրան մօտ, որուն կամարին վրայ արձանագրուած է շինութեան յիշատակարանը՝ 1785 թուականաւ։

Շնորհիւն Աստուծոյ շինեցան կամարակապ դուռն եւ արեւելակողման ներքնայարկը, որք են վեց խուցք եւ մի Համբարանոց բրնձոյ, նանդերձ կցորդ շինուածովըն. նոգածութեամբ Տեառն Պուկասու սրբազն կաթուղիկոսին, արդեւամբք Զուղայեցի Խմեխազեան Խոայիկ աղային, ի բարի յիշատակ իւր եւ կենակցին իւրոյ Մարիամ խաթունին, եւ որդւոյն իւրեանց Մովսէս աղային, եւ այլ ամէն կենդանեաց եւ ննջեցելոց իւրեանց ի ԱՄԼԴ թուին։

Ասոնց կից հարաւակողման թեւին արեւելեան մասին մէջ էր մեծ խոհանոցը, վերաշինուած Պուկաս կաթողիկոսէն. վասն զի զայն կանխաւ 1718ին շինած էր Աստուածատուր կաթողիկոսը՝ Տնտեսուն կոչելով, ինչպէս կը ցուցընէ արտաքուստ հիւսիսային որմի վրայի արձանագրութիւնը.

Ո՞ՃԿԵ թուին ես Համատանցի Տէր Աստուածատուր կաթողիկոս եւ տու շինել Տնտեսուն ի վայելումն Առըրը Էջմիածնիս միաբանից։

Եջմիածնի մէջ առաջին անգամ տպարան հաստատուած է Ախմէոն կաթողիկոսը 1771 թուին, արտաքին պարսպի արեւմտեան կողմը, որոն յիշատակարանն արձանագրուած էր զրան վրայ այսպէս.

Ասոււծով հաստատեցաւ Տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աւթուս Եջմիածին ամենայն պարագայիւըն, նոգաբարձութեամբ Տեառն Սիմէոնի սրբազն կաթողիկոսին Երեւանցւոյ, արդեամբ Զուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտաւն Գրիգոր Աղային Խոչաչանեան որ մականուամբ Զարիկենց. ի յիշատակ իւրեան, եւ իւր ի Քրիստոս համգուցեալ Ճնողացն՝ Միքայէլն եւ Մամիսաթունին, իւր կենակից Մատթևային, եւ վաղաթառամ Միքայէլ որդւոյն, եւ քերցն Անամարիային եւ Զիպիտային. հօրեղբարցն՝ Եղիազարին, Սաֆարին եւ Աղեքսանդրին. պապուն Գրիգորին եւ կենակից Թագուհւոյն, եւ հօրաքեռն Զիժազատային, եւ մեծ պապ Յակոբանին, եւ հաւրեղբօր դստերացն՝ Պէկզատային եւ Գիւլնաբաթին, եւ այլ ամենայն հին եւ նոր ննջեցելցն նորին: Այսու պայմանաւ՝ զի ի տարին Բ անգամ ի տաւնի Լուսաւորչին եւ Հրեշտակապետացն ի սուրբ Աւթուոչս պատարագ մատչիցի նանդիսաւորութեամբ, յիշելով զնոսա. որոց յիշատակն օրմնութեամբ եղիցի. ամէն. Թ. ՈՒՄԻ:

Կար նաեւ թղթատուն՝ 1776ին հաստատուած : Այս առաջին տպագրատունը յետոյ փոխազրուեցաւ վերոյիշեալ խոհանոցի տեղը և ի վերջոյ, Մակար կաթողիկոսի օրով, կառուցուեցաւ վանքի արեւելեան կողմը զըտնուող մեծ հրապարակի հարաւակողմը. կանոնաւոր, ընդարձակ, ազատ և տպարան անուանելու արժանի շինութիւն մի է. իր մէջ կը պարունակէ առանձին բաժանմունքներ, ձուլարան, մթերանոց, զրաշարներու սրահ, տպագրատուն՝ երեք ձեռաց և երկու արագատիպ մամուլներով : Մ. Մանաւարեան և Յ. Անանեանց և թերեւս ուրիշներ ալ, տպարանիս ճոխութեան և հարստաթեան զլխաւոր պատճառներն եղած են իրենց նողասուներով: 1869էն սկսեալ հոս կը տպուի Արարատ տմուգիրը. տպուած են ու կը տպուին նաեւ ուրիշ զրքեր, որոնց մէջ յիշելու արժանի է մեծազիր ձաշոցն: Վանացո հարաւային թեւին ամբողջ միջին և արեւմտեան մասը կը զրաւեն ամարան և ձմերան երկայն սեղանատունները՝ իրարուից, նշանաւոր ընդարձակութեամբ և քարէ ամուր շինուածքով, մինչե երկու հարիւր հոգի կրնան ընդունիլ: Աեղանատունն ի հնուց կառուցուած և երկուքի բաժնուած էր . ամառնայինը Ախմէոն կաթողիկոսը վերստին շինել տուաւ կոփածոյ բարերավ. բայց Ղուկաս կաթողիկոսը նոր շինութեամբ

աւելի ընդարձակեց, սեղանները ու նստարանները ամբողջ միակտուր քառերով շինելով և արեւմտեան ծայրը զրաւ կաթողիկոսի զահը՝ չորս սիւներով կաթողիկէի մը ներքեւ, որ յետոյ փոխազրուեցաւ արեւելեան ծայրը. միայն հանդիսի օրեր հօն կը բազմի կաթողիկոսը միարաններու հետ : Կրկին գոներով ասկէ կը մացուի ձմրան սեղանատունը, զոր ըստ արձանագրին 1713ին նորոգած է Աղեքոսանդր կաթողիկոսը.

Ի Թուին ՈՒՃԿԲ ես Զուղայեցի Աղեքսանդր կաթողիկոս ամենայն Հայոց շինեցի սեղանատունս ի վայելումն սրբոյ Էջմիածնի միաբանից վասն ձմռան :



Ա. Էջմիածնի սպարանը :

Նոր խոհանոցն է ամրան սեղանատան հարաւակողմը՝ զրեթէ հարաւակողմեան թեւին միջավայրը. անոր մօտ են մառանն, զինհտուն և սառնատուն, որոնց ամենուն վրայ է ընդարձակ ամրարանոցը, շինուած Ղուկաս կաթողիկոսի օրով, 1788ին, Զուղայեցի Մարգար Խալդարեանցի ծախքով, ինչպէս կը տեսնուի արձանագրութենէն.

Յաջողմամբ ամենակարողին Աստուծոյ եւ նոգածութեամբ Տեառն Պուկասու սրբազն կաթուղիկոսին ամենայն Հայոց նորոգեցաւ ի նիմանէ Սեղանատունս եւ փոքր սրանս նանդերձ ամենայն վերնայարկօքն, ծախիւք Զուղայեցի Խալդարեանց ի Բաղտատ բնակեալ Մարգար աղային. ի յիշա-

տակ լնքեան եւ նոգելոյս ծնողացն իւրոց Աւետին եւ Ռվաննային, եւ քեռն իւրոց Աննային, եւ կանանցն իւրոց համգուցելոց եւ կենդանեաց, եւ այլ ամենայն իւրայնոցն. ի ՈՒՄԼԵ Թուականի:



Ա. Էջմիածնի աւետարանի փղոսկրեայ կազմ:

**Եպիսկոպոսներու սեղանատունը** առանձին է արեւմտեան և հիւսիսային թեւերու անկիւնը, հին շուկայի մօտ: — **Հարաւային կողմը** ամառնային սեղանատան և **Ղազարասպատի** զրան վրայ, կաթողիկոսարանի մօտ շինուած է **Էջմիածնի հարուստ Մատենագարանը** կամ Գրատունը, որ առանձին ինամ-

քով պատրաստուած պահարաններու մէջ զասաւորած են հին ու նոր ձեռագիր և տպեալ զրբեր, թէ՛ մագաղաթի և թէ թղթի վրայ. կան գեղեցիկ նկարներով զարդարուած ձեռագիրներ, աչքի կ'իյնայ ի միջի այլոց փղոսկրեայ կազմով ձեռագիր Աւետարան մը՝ Պարսկաստանէն բերուած, հրաշակերտ է ասոր կողքի վրայի բարձրագանգակ նկարն, որուն զաղափար մը կրնայ տալ մէկ կողմի նկարը : Մատենագարանի մէջ կը գտնուին կաթողիկոսներու հրովարտակ-ները զարդարուած կայսերական կնքով : Յակոր վարժապետ Կարինեանի 1863ին ի Տիգիս հրատարակած ցուցակի մէջ նշանակուած են 2340 ձեռագիր մատեներ, որոնց վրայ յետոյ մինչեւ ցարլ աւելցեր են ուրիշ շատեր : Բոլոր Եւրոպացի բանասէր ուղեւորները մեծ փափաքով խնդրած են տեսնել ու քննել տեղւոյս զրբերը, բայց քիչեր կրցած են տեսնել : 1837ին գրատունը ընդարձակած միջոց՝ զրբերը նիւթի կարգու զասաւու-րեցին : 1879 թուին Գէորգ կաթողիկոսը զրատան առջեւ առանձին սե-նեակ մը պատրաստել տուաւ, իրեւ լութերցարան :

Վանացս ներքին քառակուսին զուրս եղած զլխաւոր շնչերէն մին է Սիւնհաղոսի կամ Սինօդի տաեանը և զիւանատունը՝ արեւմտեան հարա-ւային կողմը, ուր առաջ հիւրանոց էր Փոքր Ղազարսպատ անուամբ : Սի-նօդը հաստատուած է Ուուսաց կայսեր հրամանաւ 1836 թուին, և զործել սկսաւ 1837ին Կարլեցի Յովհաննէս կաթողիկոսի օրով . սա իրեւ վե-րահսկող և սահմանիչ է Էջմիածին Աթոռոյն եկեղեցական գործոց տեսչու-թեան . որուն նախագահն է կաթողիկոսը և անդամները՝ երկու արքեպիշ-կոսոս, երկու եպիսկոպոս, չորս վարդապետ, հոգաբարձու և քարտուղար հանդերձ զրագիրներով, և այլն : — Պարսկի արեւմտեան հարաւային ան-կիւնը կը գտնուի բաղնիքը, որուն անուամբ կը կոչուի նաեւ մերձակայ զուոր : Արեւմտեան կողմի ոլարսպէն ներս մեծ մասամբ պարտէղ է և ծա-ռաստան և մեծ աւաղան մը կայ վեհարանի դիմաց . ծառատունկներու մեծ մասը և աւաղանը՝ Ներսես Ե՞ արդիւնք են, որ զրեթէ 30000 ծառ տնկեց և կ'ուղէր դեռ հազարներ տնկել Էջմիածնի մէջ : Էջմիածնի նորոգութեան սկիզբէն ի վեր՝ ջրի համար կաթողիկոսները շատ հոգ տարած են, և իրենց մեծ և պիտանի վաստակներէն մին կարելի է համարել ջրի զանա-զան շտեմարանները և ճանապարհները, զորս շինեցին Էջմիածնի մէջ և սահմաները, շատ աշխատութեամբ և ծախքով : Նախ Փիլիպպոս կաթողի-կոսը, ինչպէս առաջ յիշեցինք, Արագածայ Կիւզէլ տերէ անուն վտակը գարձուց դէպ ի Քառաղ, և արքունի հրամանով անոր կէսը սեփհականեց վաղարշապատի և Էջմիածնի . որուն համար ուրիշ գիւղեր յետոյ շատ վի-ճեցին բայց չկրցան զրաւել : Նոյն կաթողիկոսը վանաց գետնայարկի խո-

նաւութիւնը՝ ցամքեցընելու համար, ստորերկրեայ ճանապարհ շինել տուաւ։ Այս տեսակ ջրի ճանապարհներուն Քասերսան կ'ըսեն։ Ախմէոն կաթողիկոսը 1768 թուին ուրիշ քանդան մ'ալ շինել տուաւ, յատակի ջուրերը հաւաքելու համար և միացուց հին քանդանի հետ։ Գարձեալ Զուղայեցի Յակոբ կաթողիկոսը ջուր բերել տուաւ Քասազ զետէն Վազարշապատի վարչն և երկրի



Տ. Տ. Յովհաննէս Ը կաթողիկոս Կարբեցի։

առկէն անցընելով վանքի հիւսիսային կողմէն հանեց Կաթողիկոսարանի պարտէզը և անկէց քարուկիր ազուգաներով մինչեւ Ղազարապատ։ Պուկաս կաթողիկոսը նորոգելով այս ազուգաները, զրեց իր յիշտատկարանը այսպէս.

Նորոգեցաւ Քանքանս բոլոր շրջանակօքն ի նայրապետութեան Տեառն Պուկասու սրբազն կաթողիկոսին, արդեամբ Ազուղեցի մահտեսի Կարապետին, եւ կնոջն մահտեսի Եղիսաբերին, եւ որդւոյն՝ մահտեսի Հայրապետին, ի թւ. Հայոց ՈՄԼԳ։



Տ. Տ. Ակրսէս Ե կաթողիկոս:

Յովհաննէս կաթողիկոսի օրով եւս նորոգուած է այս քանքանը, ինչպէս կը յայտնէ արձանագրութիւնը.

Այժմ եւս վերատին նորոգեցաւ Քանքանս ի նայրապետութեան Տեառն Յովիաննու կաթողիկոսին կարբեցւոյ, արդեամբ Ղարսեցի Մատակեանց մահտեսի Օվաննէսի որդի մահտեսի Յակոբ աղային, յամի Տեառն 1835:

Նոյն Յակոբ կաթողիկոսը շինած էր նաեւ ուրիշ ջրի ճանապարհներ և անդաստաններ ոռոգելու համար լճակներ։ Վերջին կաթողիկոսներէն ոմանք եւս, ինչպէս նաեւ Գէորգ Դ, նորոգութիւններ ըրին ազուգաներու և քանքանի վրայ։ — Էջմիածնի հարանոցը՝ որ Ղազարապատ անուամբ ծանօթ է, կը գրաւէ զրեթէ հարաւակողման բոլոր շէնքը։ Կրկնայարկ և եռայարկ է և ունի երեսունէ աւելի սենեակներ։ շինուած է Ղազար կաթողիկոսէն 1750 թուին, ինչպէս արձանագրուած է հարաւային մեծ զրան վրայ։

### Ի ՈՃՂԹ Թովին. Աստուածային շնորհիւ լցեալ

Տէր Ղազարոս հովիւն լնտրեալ,  
Եւ պատրիարքըն մեր գովեալ,  
Կըկն զաթոռն մեր լուսաւորեալ  
Չքնաղ ձեւով ազնիւ կազմեալ,  
Չոր տեսանողն եղեն ափշեալ.  
Քաղցր անուամբ զսա պսակեալ  
Ղազարապատ վերածայնեալ։

Ղազարապատի արեւմտեան մասի վերնայարկի մէջ Պօղոս և Պետրոս Եռասուֆեանք, Եղիպառոսի փոխարքայի պաշտօնեանները, և Ստեփան Սահակեան՝ անոնց գործակիցը, 1839 թուին երեք սենեակներ նորոգեցին իրենց ծախքով, իւրաքանչիւրի արեւելեան կողմը զրելով մէկ մէկ յիշատակարան, որոնք են.

Յամի 1839 յաւուրս Բ Յովիաննու կաթողիկոսի ամենայն Հայոց շինեցաւ այս սենեակ արդեամբք եւ ծախուք բարեպաշտ իշխանապետին Հայոց պերճապատիւ Պօղոս բէկն Յովսէփեան Զմիւռնացւոյ բնակելոյ այժմ յԱղեքսանդրիա Եղիպառոսի։

Յամի 1839 յաւուրս Բ Յովիաննու կաթողիկոսի ամենայն Հայոց շի-


նեցաւ այս սենեակ արդեամբք եւ ծախուք բարեպաշտ իշխանին Հայոց գերապատիւ Աղայ Պետրոսի Յովսէփեան Զմիւռնացւոյ, բնակելոյ այժմ ի Թրեստ։

Յամի 1838 .... մեծաշուք Աղայ Ստեփանի Խէլքայեանց Աահակեան բնակելոյ այժմ յԵգիպտոս։

*Հիւրանոցը նորոգուած է վերջին անգամ 1879 թուին։ Ղաղարապատի արեւմտեան մասի մէջ կայ քառակուսի զեղեցիկ պարտէզ և մէջը աւազան։ իսկ արեւելեան մասն է ընդարձակ պարտէզ, որուն հիւսիսակողմը՝ արեւելեան պարսպին կից կան ախոռներ, գոմեր և պարտէզներ։*

*Էջմիածնի կաթողիկոսի հանրածաւոլ միասկետական իշխանութիւնը, բնաշխարհի և ուրիշ կողմեր գաղմող Հայոց վրայ կը տարածուի։ եպիսկոպոսներու թեմերու բազմութիւնը, կաթողիկոսի ընթերակայ արքեպիսկոպոսները, այլ և այլ պաշտօնեաները, վանքի միաբանութիւնը, հիւրեր, պանդուխտներ, բազմաթիւ մշակներ, սպասաւորներ, և այլն, այս ամէնուն համար հարկաւոր են հարուստ կալուածներ և եկամուտներ։ Ազգիս իշխանութեան օրով, կամ մինչեւ այն ժամանակ, երբ կը պահուէին նախնեաց իրաւունքները, մեծամեծ և բազմաթիւ կալուածներ ունէր կաթողիկոսարանը, որոնց համար ԺԲ դարու պատմիչ մը կ'ըսէ, թէ կը հաւասարէին արքունեաց կալուածներու, վասն զի ունէր հինգ հարիւր մեծամեծ և շահաւետ զիւղեր։ Բազմազիմի անցքերէ և փոփոխութիւններէ վերջ, Ամոռոյն սեփհական կալուած մնացին միայն հետեւեալ հինգ զիւղերը՝ երկու կամ երեք դարերէ ի վեր, Վաղարշապատ, Օշական, Մուղեմի, Եղիշվարդ և Մաստարա։ որոնց վրայ երկարօրէն կը խօսի Աիմէոն կաթողիկոս Զամրու զրքին մէջ, ինչպէս նաեւ Շահիսաթունեան։ Ասոնցմէ զատ՝ մերձաւոր զիւղերու մէջ և հեռուները ունի ոչ սակաւ կալուածներ, դաշտեր, ձիթահանք, կը պակներ (Ալեքսանդրապոլ, Տփղիս, և այլն), և ժողովրդեան առաս նուիրատութիւններ ու առերքեր՝ զորս կը հաւաքին Էջմիածնի նուիրակները որոշեալ ժամանակաց մէջ, բոլոր հայարնակ վայրերէ։ — Պատմական և մեծ վանքիս և Էջմիածնի աթոռոյն վրայ ճոխազոյն տեղեկութիւններու ցանկացողներ, կրնան գտնել Աիմէոն կաթողիկոսի Զամրու զրքի, Շահիսաթունեան եպիսկոպոսի Ստորագրուրիւն կարողիկ Էջմիածնի անուն զրքի և այլ ոչ սակաւ ցարդ հրատարակուած զրքերու, լրագիրներու և հանդէսներու մէջ։ Մեծ, Աղէքսանդր Դ Երիցեան, անխոնչ աշխատութեամբ, բաւական մանրամասն հրատարակած է «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և կովկասի Հայք ՏԻՀՐՈՐԴ դարում» վերնագրով երկու հատորներ,*

որոնց մէջ բռվանդակուած է 1801էն մինչեւ 1842 թուի պատմական անցքերը : Ափսօն որ այս կարեւոր գործին շարունակոթիւնն լոյս չտեսաւ : Յանկալի է որ Էջմիածնի միաբաններէն մին հաւաքէր և ճոխ



Ներսուիսեան լճի և Ս. Գայիսանէի մէջ տեղ եղած ծառասոսանը :

կերպով հրատարակէր տեղոյն զանազան քաղաքական և եկեղեցական անցքերը՝ քաղելով զրբերու յիշատակարաններէ և զիւանական զրութիւններէ , որոնց հետ նաև Պարսից թագաւորներու հրովարտակաց պատճեն-

ները, աթոռոյն նորոգութենէն մինչեւ Ռոտոաց տիրապետութիւնը։ Կարեւոր է նաև կաթողիկոսներու ճիշդ շաբքը զնել Էջմիածնի աթոռոյն հաստատութենէն մինչեւ ցայժմ։ Շահիսթունեանը իր ստորագրութեան մէջ և ուրիշներ իրմէ վերջ կիրակոս Վիրապեցիէն մինչեւ այժմեան 8. Մկրտիչ Ա, իրարմէ տարբեր թիւեր կը դնեն, վասն զի ոմանք կը հաշուեն նաև աթոռակից կամ փոխանորդ կաթողիկոսները և ոմանք զանց կ'ընեն։ Մենք աւ ցարդ հրատարակուած կաթողիկոսներու ցանկերը աչքէ անցնելով կը դնենք հետեւեալ ցուցակը։

## ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

ԿիրԱԿՈՍ Ա. ՎԻՐԱՊԵՅԻ. — Քաջբերունեաց Խառարաստ գիւղէն։ ընտրեցաւ 1441ին ի Ա. Էջմիածին։ Երկու տարիէն հրաժարեցաւ 1443։ Հանդեաւ 1448ին։

ԳՐԻԳՈՐ Ժ. ՄԱԿՈՒԵՅԻ. — Ծնարեցաւ 1443ին. 1448ին իրեն աթոռակալ կամ աթոռակից օծուեցաւ Էջմիածնի մէջ Արիստակէս։ 1461ին Աղթամարայ Զաքարիա կաթողիկոսը Էջմիածինը գրաւեց և 1462ին մերժեցաւ։ Սարգիս՝ որ Ա. Աղը տարեր էր, աթոռակից եղաւ 1462ին։ Գրիգոր հանդեաւ 1466ին 23 տարի վարելէ վերջ։

ԱՐԵՍՏԱԿՅԱ. Բ. ԱԹՈՌԱԿԱԼ. — Առ 18 տարի աթոռակցութենէ վերջ 1466ին յաջորդեց։ Հանդեաւ 1470ին։

ՍԱՐԳԻՍ Բ. ԱԶԱՏԱՐ. — Զորս տարի Գրիգորի և 4 տարի Արիստակէս Բէ աթոռակից լինելէ վերջ, յաջորդեց 1470ին. Հանդեաւ 1474ին։

ՅՈՎՃԱՆՆԵՅԻ Է. ԱԶԱԿԻՐ. — Յաջորդեց չորս տարի Սարգիս Բէ աթոռակից լինելէ վերջ 1474ին. Ա. Աղը Աղթամարէ դարձուց 1477ին. տասը տարի վարեց և 1784ին հրաժարելով Լեհաստան դնաց։

ՍԱՐԳԻՍ Գ. — Տասը տարի նախորդին աթոռակից լինելէ վերջ յաջորդեց 1484ին. աթոռակից ունեցաւ Արիստակէս Գ, Յուսուկ, Թաղենու, Դաւիթ, Եղիշէ, Յովհաննէս, Ներսէս, Զաքարիա, և Հանդեաւ 31 տարի վարելէ վերջ 1515ին։

ԶԱՅԱՐԻԱ. Բ. — Յաջորդեց 9 տարի աթոռակցութենէ վերջ 1515ին. Հանդեաւ 1520ին։

ՍԱՐԳԻՍ Գ. ՎԻՐԱՍՏԱՆՅԻ. — Հինգ տարի աթոռակցութենէ վերջ յաջորդեց 1520ին. Հանդեաւ 1537ին։

ԳՐԻԳՈՐ ԺԱ. ԲԻՒԶԱՆԴԱՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1537ին. հանգեաւ 1542ին: ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ՍԱԼՄԱՍՏԵՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1542ին. ոս ԵՐՈՎԱԿ ՊՆԱԳ 1548ին. աթոռակից ունեցաւ Բարսեղ Բ. Գրիգոր և Արիստակէս. վարեց 22 տարի և հանգեաւ 1564ին:

ՄԻՔԱՅԵԼ Ա. ՍԵԲԱՍՏԱՅԻՆԻ. — Յաջորդեց 1564ին 22 տարի աթոռակցութենէ վերջ. աթոռակից ունեցաւ Բարսեղ Բ. Գրիգոր և Առեփանոս Զ. հանգեաւ 1570ին:

ԳՐԻԳՈՐ ԺԲ. — Ճասն և ութ տարի նախորդներուն աթոռակից վիճելէ վերջ յաջորդեց 1570ին. աթոռակից ունեցաւ Առեփանոս Զ. Թաղէնս Բ. Առաքել, Գառիք. վարեց 17 տարի և հանգեաւ 1587ին, 90 տարեկան:

ԴԱԼԻԻԹ Դ. — Ութ տարի աթոռակցութիւնէ վերջ յաջորդեց. 1587ին. Երեք աթոռակիցներ ունեցաւ՝ Մելքիսեդեկ, Գրիգոր և Առակ. վարեց 41 տարի, հրաժարեցաւ 1628ին և հանգեաւ 1633ին:

ՄՈՎԱՅԻՍ Գ. ՏԱԹԵԽԱՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1629ին. Էջմիածինը վերանուրողեց. վարեց Երեք տարի և հանգեաւ 1632ին:

ՓԻԼԻՊՈՈՍ Ա. ԱՂԵԲԱԿԵՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1633ին. ուզեւորեցաւ Երուսաղէմ և Կ. Պոլիս 1651-3. 22 տարի վարեց և հանգեաւ 63 տարեկան 1655ին:

ՅԱԿՈՎ Դ. ԶՈՒՂԱՅԵՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1655ին. իրեն հակաթոռեղաւ Եղիազար Այնթառցին 1663ին յԵրուսաղէմ: Ճանապարհորդեց Երուսաղէմ և կրկին անդամ Կ. Պոլիս. 25 տարի վարեց և 1860ին հանգեաւ ի Կ. Պոլիս:

ԵՂԻԱԶԱՐ Ա. ԱՅՆԹԱՊՅԻՆԻ. — 1862ին յաջորդեց 19 տարի հակաթոռութենէ վերջ. հանգեաւ 1691ին:

ՆԱՀԱՊԵՏ Ա. ԵԳԵՍԱՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1691ին. հանգեաւ 1705ին:

ԱՂԵԲԱԿԵՅՐ Ա. ԶՈՒՂԱՅԵՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1706ին. հանգեաւ 1714ին:

Ա.ՍՈՒԿԱՆՈՍՈՒՐ Ա. ՀԱՄԱՏԱՆՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1715ին. հանգեաւ 1725ին:

ԿԱՐՈՊԵՏ Բ. ՈՒԼԱՅԵՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1726ին և օծուեցաւ ի Կ. Պոլիս. հասաւ Էջմիածին 1728ին. հանգեաւ 1729ին:

Ա.ԲՐԱՀՈՄ Բ. ԽՈՇԱԲԵՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1730ին. հանգեաւ 1734ին:

Ա.ԲՐԱՀՈՄ Գ. ԿՐԵՏԱՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1734ին. հանգեաւ 1737ին:

ԴԱՎԱՐ Ա. ԶՈՒՀԿԵՅԻՆԻ. — Ընտրեցաւ 1737ին. իրեն 5 ամիս հակաթոռ ունեցաւ Յովհաննէս Աղուլեցի 1740ին: 1748ին Ղաղար մերժեցաւ և ընտրեցաւ Պետրոս Բ. Քիւրուր, բայց 10 ամիս վերջ զարձեաւ Ղաղար զօրացաւ. Ղաղար վարեց 13 տարի. հանգեաւ 1751ին:

- ՄԻՆԱՍ Ա. ԱԿՆԵՑԻ. — Ընտրեցաւ 1751ին. հանդեաւ 1753ին:  
 ԱՐԵՔՈԱՆԴԻ Բ. Կ. ՊՈԼՍԵՑԻ. — Ընտրեցաւ 1753ին. հանդեաւ 1755ին.  
 ՍԱՀԱԿ Ե. ԿԵՊԵՑԻ. — Ընտրեցաւ 1755ին. 2 տարի կ. Պոլիս և 3  
 տարի կարին մնաց. զաղարեցաւ 1759ին օծում չառած և հանդեաւ  
 1760ին:  
 ՅԱԿՈԲ Ե. ՇԱՄԱԽԵՑԻ. — Ընտրեցաւ 5 տարի տեղակալութենէ վերջ  
 1759ին. հանդեաւ 1763ին:  
 ՄԻՄՈՆ Ա. ԵՐԵՒԱՆՑԻ. — Ընտրեցաւ 1763ին. հանդեաւ 1780ին:  
 ՂՈՒԿԱՍ Ա. ԿԱՐՆԵՑԻ. — Ընտրեցաւ . 1780ին . հանդեաւ 1799ին:  
 ՅՈՎՈՒՔ ԱՐԴՈՒԹԵԱՆ. — Ընտրեցաւ 1800ին. օծում չառած հան-  
 դեաւ 8փղիս 1801ին:  
 ԴԱԼԻԹԻ Ե. ԵՆԵԳԵՑԻ. — Գրաւեց 1801ին. երեք տարի վերջը ըն-  
 կեցաւ 1804ին. հանդեաւ 1810ին:  
 ԴԱՆԻԵԼ Ա. ՍՈՒՐՄԱՌԵՑԻ. — Ընտրեցաւ 1801ին. օծուեցաւ 1802ին.  
 աթոռը նստաւ 1804ին և հանդեաւ Երևան 1808ին:  
 ԵՓՐԵՄ Ա. ԶՈՐԱԳԵՂՅԻ. — Ընտրեցաւ 1809ին. հրաժարեցաւ 1831ին  
 և հանդեաւ 1835ին:  
 ՅՈՎՀԱՆՆԵՍ Ը. ԿԱՐԲԵՑԻ. — Ընտրեցաւ 1831ին. հանդեաւ 1842ին:  
 ՆԵՐՍԻՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ. — Ընտրեցաւ 1843ին. հանդեաւ 1857ին:  
 ՄԱՏԹԵՈՍ Ա. Կ. ՊՈԼՍԵՑԻ. — Ընտրեցաւ 1858ին. հանդեաւ 1865ին:  
 ԳԵՂՐԻ Դ. Կ. ՊՈԼՍԵՑԻ. — Ընտրեցաւ 1866ին. հանդեաւ 1882ին:  
 Ներսէս Վարժապետեան ընտրեցաւ 1884ին, հրաժարեցաւ և հանդեաւ  
 նոյն տարին:  
 ՄԱԿԱՐ Ա. ԹԵՂՈՒՏՅԻ. — Ընտրեցաւ 1885ին. հանդեաւ 1891ին:  
 ՄԿՐՏԻՉ Ա. ՎԱՆԵՑԻ. — Ընտրեցաւ 1892ին 72 տարեկան, օծուեցաւ  
 1893 սեպտ. 22ին:

Երկրի խառնակ վարչութեան և Եջմիածնի վաճառականներու ճանա-  
 պարհէ գուրս զտնուելուն պատճառաւ ԺԵ և ԺԶ զարերու մէջ Եւրոպացի  
 ուղեւորներու աշբէ վրիպած կը կարծուի վանքո , և նախ կը համարուի  
 Եջմիածնի անուան հոչակուիլն Ատեփանոս կաթողիկոսի յարեւմուտս ըրած  
 ուղեւորութեամբ և ասդա Արգարու և իր Առլթանշահ որդւոյն՝ իրբեւ Հայոց  
 ազգապետ, երկար ժամանակ Հոռովմ բնակելով: ԺԵ դարու սկիզբը Շահ-  
 արասի աշխարհակալութեամբ Այրարատայ քաղաքական կամ վարչական  
 մեծ յեղափոխութիւններով , դիւրինցան Եւրոպացի դեսպաններու , վաճա-


ուականներու և բարողիչներու երթեւեկութիւնք։ Հին ուղեւորներէն յիշենք թերթանահը, Թաւվոնիէ, Շարտէն և անկարանն թուսնրֆոր, վերջին ժամանակաց մէջ Լուսիածին ունեցած է բազմաթիւ ազգային և օտար այցե-



Տ. Տ. Վարդառիկոս :

լուներ, որոնք զանազան կերպով նկարագրած են զայն. վերջին ու նոր այցելուներու մէջ նշանաւոր է Պ. Լինչ՝ որ բաւական մանրամասնօրէն կը նկարագրէ։ — Ներսէս Եկաթողիկոսը 1847 թիւէն սկսեալ Լուսիածի վանքէն զուրս արեւելեան հարաւակողմը տնկել տուաւ բիւրաւոր կազա-

մայիսեր և ուսենիներ՝ 250000 ծառէ աւելի , որոնց մէջ կային նաև  
40000 թթենիներ՝ շերամի համար . այս կաթողիկոսը փորել տուաւ նաև  
մեծ աւազան կամ ձկնարոյժ լճակ մը՝ 160 մետր երկայնութեամբ և



Ո . ԵՀԱԿԱՆԻ ՎԵՐԱԼՈՒԹՅԱՆ Լիճ :

60մ. լայնութեամբ , եղերքները քարէ , ջուրը բերելով Շահ-արիւ առուէն .  
կ'ըսեն , թէ կ'ուզէր տնկել մէկ միլիոն ծառ :

Եջմիածնի մօտ՝ արեւելեան կողմը դանուող Երեւանը՝ Այրարատեան

աշխարհի ամուր քաղաքազլուխը լինելով, շատ անգամներ իրեն կը ձգէր աշխարհակալներ և աշխարհաւերներ, որոն աղետից և աւերմանց շատ անգամ վիճակակից եղած է նաև վանքս : Էջմիածնի մօտ ստէպ պատերազմներ տեղի ունեցած են թուրքաց դէմ Պարսիկներէն և Ռուսներէն : Աբրահամ կաթողիկոսը կը պատմէ թահմազ Դուլի խանի Էջմիածնի գալն, 1735 տարւոյ յունիսի մէջ . սա նոյն տարին Օսմանցիներէն առնելով Երեւան քաղաքը, եօթանասուն տարի երկիրը խաղաղացաւ մինչեւ անցեալ դարու սկիզբը (1804), երբ Ռուսներու հետ պատերազմ բացուելով՝ Պարսիկները Ապպաս-Միրզայ արքայորդոյն առաջնորդութեամբ Էջմիածնի շուրջը բանակ զրին հարաւային, արեւելեան և արեւմտեան կողմէն : Ռուսաց Յիցիանով զօրավարը բուն բանակը հաստատեց հիսոխային կողմը, Որ յանեից կոնդ կոչուած բլրակի վրայ . յարձակելով ցրուեց Պարսից բանակը, և Էջմիածնի մէջ թողլով հիւանդները, վիրաւորները և կարասին, փախստականներու ետեւէն գնաց մինչեւ Քանաքեռ : Բայց երբ բանակին մէջ հիւանդութիւն տարածուելով ստիպուեցաւ Երեւանայ պաշարումը վերցընել, զարձաւ եկաւ Էջմիածնի, անկէ վերուց սպասներէն մաս մը՝ հանդերձ մաս մը միաբաններով, որպէս զի Պարսից վրէժխնդրութեան չ'ենթարկուին, տարաւ Վրաստան . ուսկից յետոյ մաս մը զարձաւ : Նշանաւոր գէպքեր պատահեցան նաև Ռուսներու և Պարսից երկրորդ պատերազմի միջոց 1827 թուին, Էջմիածնի սահմանները, որուն պաշտպանութեան համար ուսու գունդ մը եկաւ, որոնք զարկին և զարնուեցան Պարսիկներէն՝ առաջնորդութեամբ Քրայենսքի գնդապետին . յետոյ 1833 թուին, Եփրեմ կաթողիկոսը, այս պատերազմի մէջ ընկնողներու վրայ մահարձան և յիշատակի կոթող մը կանգնեց : 1827-28 տարիներու պատերազմէն վերջ, Այրարատեան աշխարհի հետ Էջմիածնին ալ ուսու պետութեան իշխանութեան տակ անցաւ և աղատեցաւ այլազգիներու տուած նեղութիւններէն : Սակայն Էջմիածնի անցեալ դարու պատմութեան Էջերն եւս ունին իրենց տիուր տեսարաններն, որոնց վրայ ծանրանալլ, յարմար չենք դանար ներկայ հատորիկի մէջ : Խակ ներկայն, ներկայն արգէն ծանօթ է ամէն Հայու :

